

ՆՈՐ ԱՎԵԾԱՔԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՆԷՊ, 8 ՅՈՒԼԻՍ, 1931

ԹԻԻ 11

ՄԵՐ ԿՐԹԱԿԱՆ ՀՈՒՆՁՔԸ
ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԱՍԼԹԷՅՆԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԸ
ՔՆՆԻՉ ՄԱՐՄԻՆ

ՕԴԵՐԵԻՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ ԱԽՏԱԾԻՆ ԵՐԵԻՈՅԹՆԵՐ
ԳՐԵԳ՝ ՏՈՔԹ. Ա. ՃԵՊԵՃԵԱՆ

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287, ALEP, SYRIE

ՏԳԱՐԱՆ ԳՈՂԷՃ ՀԱՆԷՊ

ՆՈՐ ԱՒԵՏԱՐԵՐ

Արսոնասէր՝ Վեր. Կ. Յարուքիւնեան
Խմբագիր՝ Տիգրան Ճ. Խրչոքեան

Կը հրատարակուի ամիսը երկու ան-
գամ, տարեկան բաժնեգինն է 150 զրուշ
սուրի. Սուրբիոյ համար, և մէկ ու կէս
տոլար՝ ուրիշ բոլոր երկիրներու համար:

Յոգուածներու բնագիրները չեն զըր-
կուիր եթէ այդ մասին փոփաք չյայտ-
նուի յօգուածագիրներու կողմանէ. չհը-
րատարակուող յօգուածներու համար
պէտք է զրկել փոստի ծախսը:

Յօգուածները պէտք է գրուին թուղ-
թին մէկ էջին վրայ մեկանով, զիւրն-
թիւնի և մաքուր կերպով:

Բաժանորդներէն կը խնդրուի առա-
ջին առթիւ յայտնել իրենց նոր հասցէն
երբ փոփոխութեան ենթարկուի ան:

ՍՏԱՑԱՆՔ

ԴՐՈՇԱԿ, ամսաթերթի Մայիսի և
Յունիսի թիւերը: Իրաքանչիւր թիւին
գինն է 2 ֆր. և 50 սանդ. հասցէն՝—Mlle.
S. Agopian, 5, Rue des Gobelins, Paris
(13^e).

ՀԱՅ ՍԻՐՏ, անկախ շաբաթաթերթի
Ձ. տարուան երեք թիւերը: տարեկան
բաժնեգիրն է \$ 1.50 հասցէն՝— 314 S.
60th Street, Philadelphia, Pa. U. S. A.

ՄՇԱԿ անկախ հայաթերթ, կը հրա-
տարակուի շաբաթը երկու անգամ: Տա-
րեկան բաժնեգիրն է \$ 3.00. հասցէն P. O.
B 1176, Fresno, Calif. U. S. A.

ՆՈՐ ԱՐՇԱԼՈՅՍ, Ժ. Տարի. Թիւ 760
տարեկան բաժնեգիրն է մէկ անգլիական
ոսկի. հասցէ՝ Str Aurel Vlacia No. 23,
Bucuresti III

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԵՐ ԿՐԹԱԿԱՆ ՀՈՒՆՁԲԸ

ՄԱՄԼԹԷՅՆԻ ՀԱՇԻՒՆԵՐՈՒՆ ԱՌԹԻԻ

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

ՎԵՐ. ԱՏԱՏՈՒՐԵԱՆ ԿԸ ՄԵԿՆԻ

ՀԱԼԷՊԻ ԿՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ

ՄԱՄԼԹԷՅՆԻ ՀԱՇԻՒՆԵՐԸ

ՄԵՐ ՄԻԱԿ ՔԱՐՈՋԻՉԸ

ՕԴԵՐԵՒՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ ԱԽՏԱԾԻՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

ԹՐԳ. Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

ՅՈՎՀ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ

ՔՆՆԻՉ ՄԱՐՄԻՆ

Ս. Ս.

ՏՈՔԹ. Ա. ՃԷՊԷՃԵԱՆ

ՔԱՂԵՑ. Հ. ՓՈԼԱՏԵԱՆ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Դ. ՏԱՐԻ

ՀԱՂԵՊ, 8 ՅՈՒԼԻՍ, 1931

ԹԻՒ 11

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՄԵՐ ԿՐԹԱԿԱՆ ՀՈՒՆՉՔԸ

Այս տարուան դպրոցական շրջանը աւարտեցաւ: Հայ և օտար նախակրթականներէն, երկրորդական և համալսարանական հաստատութիւններէն շատ մը հայ երկսեռ պատանիներ և երիտասարդներ ընթացաւարտ եղան: Կարեւորը ո՛չ շրջանաւարտներու թիւն է և ո՛չ ալ անոնց իւրաքանչիւրին ուսանողական շրջանին տեւողութիւնը: Կարեւոր հարցը սա է թէ անոնք ի՞նչպէս դուրս կուգան դպրոցներէն, և ինչպիսի իմացական, հոգեկան ոյժերով օժտուած են, անոնց անձնաւորութիւնը որչա՛փ կրթուած և զարգացած է:

Հայը ուսումնասինչ է, ամէն գիտով կ'ուզէ կարգաւ, դպրոց մը աւարտել: Ասիկայ հայութեան ոգիին օրոշ մէկ զիծը կը կազմէ: Այս է ընդհանուր կարծիքը, որուն մէջ մեծ չափով ճշմարտութիւն կայ: Բայց դպրոց յանձնել, դպրոց աւարտել անպատշաճ կրթութիւնը չի նշանակիր: Այս տարի Ամերիկական համալսարաններէն մէկուն նախագահ Կրաւթընը աշնայիսի մէկը որ հազիւ 8 տարի դպրոց յանձնած էր, բայց որուն համար վիսյեյի թէ «Լաւագոյն կրթուած մարդն էր» իր նահանգ մէջ: Այսօր շատեր կան մեր մէջ որոնք առանց իմացական և հոգեկան արժէք մը ներկայացնելու համոզուած են եւ շատերն ալ թերեւ կը համոզին, կամ առնուազն սա երեւոյթը կուտան թէ իրենք իմաստութեան բանալին գտած, գիտելիքներու ամբաւ պաշարին տիրացած, կեանքի զաղտնիքը լուծած են:

Այսպիսիներ թէ ոնէ կերպով իւրական գիւրութիւններ ալ ապահովեն, իրենց այս գաղափարին մէջ աւելի կը հաստատուին: Այսպիսիներ՝ ընկերութեան մէջ ինչպիսի գիրքի մը մէջ ալ գտնուին՝ վտանգ մը կ'սպառնան ճշմարիտ կրթութեան և զարգացումին դէմ:

Մեր ներկայ կրթական կեանքը նըկատի առնելով կուզենք հետեւեալ կէտերը պարզել:

Կրթութիւնը արտաքին զարդ մը չէ, որպէս զի անով չպարուած մէկը կարենայ մարգերու հաճելի երկնաւ: Անիկայներքին բան մըն է, մտքին և հոգիին զարգացումը, անտաշ անձնաւորութեան յզկումը, տեսնելու, գատնելու և արտայայտուելու կարողութեան մը շահումն է: Ասիկայ տաժանելի աշխատանք մըն է: Դասարանը զարգասնեալ մը չէ ալ աշխատանք մը:

Կրթութիւնը պէտք է գործնական արժէք մ'ունենայ: Դպրոցին մէջ առնուած ուսումը գործնական կեանքի մէջ դրական արժէք մը պէտք է նոյն տայ: Այս ուղղութեամբ գաղափարներու մէջ բաւական բարեփոխութիւն մը գիտելի է: Բայց այս գաղափարին սխալ մէկ արդիւնքն է կրթութիւնը նկատել զրամ շինելու միջոց մը միայն: Ասիկայ մեծապէս կը պակսեցնէ դպրոցին արժէքը, և կրթութիւնը կ'ընէ միջինական գործողութիւն մը: Մեղմնեւորու և ուսանողներու մէջ կրթութեան այս միջինական ըմբռնումը սկսած է ծաւալել, և ասոր արդիւնքը ըլլալով աշակերտնե-

րը կը զրկուէին այնպիսի տեղեր, որոնք կը կարծուին թէ այս նպատակը լաւագոյն կերպով կրնան իրականացնել: Ասիկայ ուրիշ վտանգ մըն է մեր կրթական կեանքին մէջ:

Պէտք է հոս յիշել շնորհաւորելի պարագայ մը: Գրեթէ մեր բոլոր դպրոցներու մէջ գիտելի է լեզուական յառաջդիմութիւն մը: Զարգացեալ և կրթեալ մտքի մը լաւագոյն յատկանիշներէն մէկն է՝ գրաւոր կամ բերանացի կերպով պարզ բայց շիտակ կերպով արտայայտուելու կարողութիւնը: Մեր շատ մը ուսում առած մարդոց և երիտասարդներուն մէջ այս կարողութիւնը կը պակսի: Ուրչափ ցաւալի է տեսնել իբր թէ բարձր ուսում առած մէկը, որ նոյնիսկ իր մայրենի լեզուով չի կրնար գաղափար մը տրամաբանական և քերականական պարզ կանոններուն համեմատ յայտնել: Հրապարակը ազմկողմեր շատ մը գրչի և խօսքի տէր լեզուներու հմուտ անձեր այդ լեզուներով բառեր միայն գիտեն և ոչ թէ այդ լեզուներու տիրացած են: Ունէ հայ ուսանող մը պէտք է առնուազն ճիշտնայնրիկ լեզուներու, տեղական և արեւմտեան: Աւելի լաւ է լեզու մը կատարեալ գիտնալ քան թէ շատ մը լեզուները թերի սորվիլ: Հոս կ'ուզենք շեշտել արաբերենի կարեւորութիւնը արաբախօս երկիրներու մէջ բնակողներու համար: մեր լսածին համեմատ նոյն վարժարանէն ուսումնաւարտ երիտասարդներուն հրը գործ տալու առիթը կը ներկայանայ Հայերուն երկրորդական կարեւորութիւն կը տրուի, իրենց արաբերէնի տգիտութեան համար: Մեր ուսանողները պէտք է ըմբռնեն թէ արաբախօս աշխարհի մը մէջ կ'ապրին և ոչ Եւրոպա կամ Ամերիկա: Պէտք է արաբերէնը սիրով և լաւ կերպով սորվիլ: Կը յոսանք որ հայ դպրոցները և ուսանողները պիտ յաջաջանան ասոր մէջ ևս:

ՄԱՄԼԹԷՅՆԻ ՀԻՒՍՆԴԱՆՈՅԸ

Վերջապէս ուրախ ենք որ այս հիւանդանոցի հաշիւներուն մասին ճշմարտութիւնը երեւան հանուեցաւ, քննիչ մարմնի մը աշխատանքին արդիւնքը ըլլալով, զոր ներկայ թիւով կը հրատարակենք: Մենք այս մասին մինչեւ հիմա լռած էինք սպասելով պաշտօնական արդար քննութեան մը արդիւնքին, միեւնոյն ատեն ցաւով հետեւելով մամուլը ազմկող գրութիւններուն թերու գէմ յայտնութեանց: Աւելորդ կը համարենք այս մասին խօսիլ, բաւական նկատելով քննիչ մարմնին գրութիւնը, որ խմբագրուած է անկողմնական սղիկով, համարձակ և վճռական շեշտով: Քննիչ մարմինը շնորհաւորելի է իր այս աշխատանքին համար:

Հիմա այս հայկական հաստատութեան գերագոյն հարցն է տնտեսապէս անոր ներկան և ապագան ապահովիլ, որ կարելի է համազգային անմիջական և տեւական օգնութեամբ: Բայց չենք հասկնար թէ ինչո՞ւ Պէյրութի մէջ մեր խորհող և ղեկավար անհատները չկըրցան օգտուիլ Մերձաւոր Արեւելքի բարեացակամ տրամադրութենէն՝ որով կարելի պիտի ըլլար հիւանդանոցի պիտօճէն ապահովիլ: Ինչո՞ւ մարդիկ, որոնց իմաստութեան և փորձառութեան վրայ այնքա՛ն վստահ էինք որքան իրենց ազգասիրական զգացումներուն վրայ, իրենց առաջին մէկ ժողովին մէջ կը մերժեն հիւանդանոցի վարչութիւնը Րիլիֆի յանձնելու առաջարկը, փոխ առաջարկելով թէ Րիլիֆը հաճի իր նպատար յանձնել հիւանդանոցի հայ վարչութեան չեղծանելու համար հաստատութեան ազգային հանգամանքը: Այսպիսի քայլի մը արդիւնքը կ'ըլլայ մերժողական պատասխան Րիլիֆի կողմանէ, անել կացութիւն մը հիւանդանոցի համար:

(Շարունակութիւնը 209 էջին տակ)

ՔՐԻՍՏՈՍԻ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԳԻՆ

11. ԱՆՁՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՄԵՂՔ Մ'Է, ՊԱՏՐԱՆՔ Մ'Է,
ՈՐ ԿՈՒԳԱՅ ՄԱՐՄԻՆԷՆ, ԲԱՅՑ ձԵՄԱՐԻՑ ԿԵԱՆՔԸ ԲՈԼՈՐ
ՄԱՐԴՈՑ ՀԱՍՍԱՐԱՊԷՍ ԿԵԱՆՔ Է

Յիսուս ինքզինք մեռնելու պատ-
րաստ գտնելով զնայ զոհոսելու: Պետ-
րոս կանգնեցաւ. հաբցուց. «Ո՞ր
կ'երթաս:» Յիսուս ըսաւ. «Ես կ'եր-
թամ հոն, ուր դուն չես կրնար դալ: Ես
պատրաստ եմ մեռնելու իսկ դուն ոչ:»

Պետրոս ըսաւ. «Ոչ, ես նոյն իսկ
հիմա պատրաստ եմ կեանքս զոհելու
Քեզի համար:» Յիսուս աւելցուց.
«Մարդ չի կրնար բան մը խոստանալ:
Ես գիտեմ որ մահը իմ առջեւ է. բայց
Հօրս կամքին հաւատալով մահէն չեմ
վախնար: Իմ մահուանս վրայ մի՛ վըշ-
տանաք, այլ հաւատացէք ճշմարիտ
Աստուծոյն, կեանքի Հօրը, ու այն ա-
տեն մահո զարհուրելի պիտի չերեւի
ձեզի, եթէ ես միտցած եմ կեանքի Հօրը
հետ այն ատեն ես կեանքէն չեմ զրկը-
ւիլ: Զիչդ է որ ձեզի պիտի չըսեմ,
թէ մահէն հաք ո՞ւր եւ ի՞նչ պիտի ըլ-
լայ իմ կեանքս, բայց ձեզի կը ցուցնեմ
ճշմարիտ կեանքի ճամբան, այսինքն
Հօրս հետ կապուելուն, միանալուն
ճամբան: Հայրը կեանքի աղբիւրն է:
Իմ վարդապետութիւնս է, թէ մարդ
պէտք է ապրի Հօրը կամքին մէջ եւ
զայն կատարէ մարդոց բարօրութեան
եւ կեանքին համար:»

Երբ ես երթամ ճշմարտութեան զի-
տութիւնը ձեր ուսուցչիչը պիտի ըլլայ:
Իմ վարդապետութեանս կատարումով
պիտի զգաք, թէ ճշմարտութեան մէջ
էք, թէ Հայրը ձեր մէջ եւ թէ դուք Հօ-
րը մէջ էք: Կեանքի Հայրը ձեր մէջ
ունենալով խաղաղութիւն մը պիտի ու-
նենաք. ոչ մէկ բան պիտի կրնայ ձեզ
անկէ գառել: Ուստի եթէ դուք ճանչ-

նաք ճշմարտութիւնը եւ անոր մէջ ապ-
րիք, ո՛չ իմ եւ ո՛չ ալ ձեր ֆիզիքական
մահը պիտի վշտացնէ ձեզ:

Մարդիկ ինքզինքնին իբր առան-
ձինն գոյութիւն կը նկատեն, որպէս
թէ անձնական կամքի ոյժով կ'ապրին:
Ասիկա պատրանք մ'է. անկա՛ միայն
ճշմարիտ կեանք ունի որ Հօրը կամ-
քը ճշմարիտ կեանքի աղբիւր կը ճանչ-
նայ: Իմ ունեցածս այս միութիւնը կը
ցուցնէ եւ կեանքը կը ներկայացնէ, ոչ
թէ որպէս առանձինն բողբոջներ, այլ
ծառ մը, որուն վրայ բողբոջներ կ'ա-
ճին: Ան միայն կեանք ունի, որը Հօր
կամքին վրայ կ'աճի, ինչպէս բողբոջը՝
ծառին: Ան որ կը փափաքի իր կամ-
քովը ապրիլ, կը մեռնի նեղուած բող-
բոջի մը նման:

Հայրը ինծի կեանք տուաւ բարիք
գործելու համար եւ ես ձեզի սովորեցու-
ցի բարիք գործել: Եթէ իմ պատուի-
րանս պահէք պիտի օրհնուիք: Իմ
պատուիրանս է, որ ամբողջ վարդապե-
տութիւնս կը խտացնէ, բոլոր մարդիկ
պէտք է զիրար սիրեն: Սիրել կը նշա-
նակէ անձնական ֆիզիքական կեանքը
ուրիշի մը գոհել: Սէրը ուրիշ սահման
չունի: Իմ սիրոյ վարդապետութիւնը
զերի մը պիտի չկատարէք, որ տիրոջ
հրամանին կ'անսայ առանց զայն հաս-
կնալու: Դուք պիտի ըլլաք այնքան
ազատ, որքան ես եմ, քանզի ձեզի
պատմեցի կեանքն ու իր նպատակը,
որ կեանք Հօր մասին մեր ունեցած ծա-
նօթութեան մէջ կը կայանայ: Դուք ո՛չ
թէ զիպուածով իմ վարդապետութիւնս
ընդունեցիք, այլ ընտրեցիք, որովհետեւ

անիկայ միակ ճշմարտութիւնն է, որով մարդ կրնայ ազատուլլալ:

Աշխարհի վարդապետութիւնը կը թելադրէ չարիք ընել, բայց ես զիրար սիրել կը սորվեցնեմ: Ասոր համար աշխարհ պիտի հալածէ ձեզ, ինչպէս որ զիս հալածեց: Աշխարհ իմ վարդապետութիւնս չի հասկնար եւ ճիշդ այդ պատճառով պիտի հալածէ ձեզ:

Աշխարհ ձեզի չարիք ընելով Աստուծոյ ծառայել պիտի կարծէ: Երբեք մի գարմանաք: Աշխարհ՝ ճշմարիտ Աստուածը չհասկնալով՝ պիտի հալածէ ձեզ. բայց դուք պէտք է ճշմարտութեան յառած մնաք: Եւ պէտք է հասկնաք, թէ այդ հալածանքը անհրաժեշտ է:

Դուք կը վախնաք, քանզի անոնք պիտի սպաննեն զիս, բայց անոնք զիս սպաննելով ճշմարտութիւնը կը յայտնեն: Ուստի իմ մահս պէտք է ճշմարտութեան հաստատման համար: Իմ մահս, քանի որ անով կը յայտնեմ, թէ ճշմարտութենէն ետ չեմ կենար, պիտի զօրացնէ ձեզ ու դուք պիտի հասկնաք սուտին ու ճշմարտին բնութիւնը: Պէտք է հասկնաք թէ մարդուն հաստատութիւն սուտը, կեղծիքը, Ֆիզիքական կեանքին մէջ կը կայանայ, իսկ անհաւատութիւնը հոգեկան կեանքին մէջ: Ծշմարտութիւնը Հօրը մէջ է. Անոր միանալուն մէջ է, որմէ կը յառաջանայ հոգիին յաղթանակը մարմինին վրայ: Եթէ Ֆիզիքական կեանքին մէջ ձեզի հետ չըլլամ, իմ Հոգին ձեզի հետ պիտի ըլլայ: Դուք ալ մարդոց նման միշտ Հոգիին ոյժը ձեր մէջ պիտի չզգաք, երբեմն պիտի կորսնցնէք, կամ թուլցընէք հոգիին ոյժը եւ մեղանչումի մէջ իյնաք: Երբեմն ալ նորէն պիտի դառնաք ճշմարիտ կեանքին. մաքմնի գերութեան ժամերը պիտի գան ձեր վըրայ, բայց կարճ ժամանակի մը համար միայն: Դուք նորէն պիտի հանդարտիք ու նորէն Հոգիին գառնաք, այն

կնոջ նման, որ թէեւ ծննդաբերութենէն կը չարչարուի, սակայն կ'ուրախանայ, քանզի մարդկային էակ մը աշխարհ բերաւ: Այսպէս պիտի ըլլայ ձեր փրկութիւնը: Եթէ մաքմնի ոյժին տակ իյնալէ ետք, հոգիով բարձրանաք, այնպիսի ուրախութիւն պիտի ունենաք, որ ուրիշ ոչ մէկ բանի պիտի փափաքիք: Ուստի նախ զիտցէք թէ նեղութեան, արտաքին կոիւնին եւ հոգիին անկուսին հակառակ, Հօրը Հոգին ձեր մէջ կ'ապրի, որ միակ ճշմարիտ Աստուած-Հօր կամքին ծանօթութիւնն է, ինչպէս ձեզի յայտնեցի:»

Թարգ. Բ. ԺԱՄԿՈՋԵԱՆ

ՎԵՐ. ԱՏԱՏՈՒՐԵԱՆ ԿԸ ՄԵԿՆԻ

Պուէնոս Այրէսէ ղրկուած գրութեան մը համեմատ Ապրիլ 28ին Վեր. Հայկ Ասատուրեանի ի պատիւ երեկոյթ մը սարքուած է: Վեր. Պարսթապէնեա, Հայ Աւետ. եկեղեցիին իրենց շէնքին մէջ հիւրընկալող եկեղեցիին հովիւը, սպանեալէն լեզուով ուղերձին մէջ ըսած է. «Աշխարհիս մէջ ամէն բան կ'անցնի բայց սէրը կը մնայ: Հոս զիրար սիրող հօտը եւ հովիւը իրարմէ կը բաժնուին, բայց հովիւը ձեր մէջ կը թողու իր սէրը:» Տիար Յ. Հալէպէեան թարգմանած է այս ուղերձը: Ապա կարգով խօսած են Տիարք Թ. Նալչաճեան, Ս. Մանուկեան, Յ. Թէրզեան, Կինեոս կողմանէ Տիկ. Վերոնիգա Գ. Տիմարեան, Տիար Յակոբ Նաճարեան «Բարի Ճանապարհ» խորագրով հայերէն ոտանաւոր մը կարդացած է, Հոգ. Եղբայրութեան կողմէ խօսած է Տիար Հ. Ապաճեան, եւ ապա խօսք սուած է Տիար Ռուբէն Պուլտուգեան: Այս բոլորը շնորհած են Վեր. Ասատուրեանի կատարած նախախնամական գերը եկեղեցիին կազմութեան շրջանին մէջ, անոր անխտրական սէրը ամէն զաղափարէ եւ ազգէ մարդերու հանդէպ, անոր մաքուր նկատ

րագիրը, քրիստոնէական պարզ հաւատքը և ազգասիրութիւնը:

Ամէնէն վերջը Տիար Յովհ. Հալէպ-լեան եկեղեցիին կողմանէ յարմար բառերով վեր. Ատատուրեանի կը նուիրէ ոսկի ինքնահոս գրիչ մը և մատիտ մը:

Վեր. Հ. Ատատուրեան թրջած աչքերով և յուզեալ շեշտով իր շնորհակալութիւնը կը յայտնէ ցոյց տրուած յարգանքին, սէրին և գովեստներուն համար, որոնց անարժան ըլլալու հասկըցնելու համար կ'ընէ սա պատմութիւնը. «Ժամանակաւ ընտանիքի մը հայրը կը մեռնի: Եկեղեցիին մէջ յուզարկաւորութեան արարողութեան միջոցին այնքան գովեստներ կը շաղկապին հանգուցեալին հասցէին, որ անոր կիներ իր տղու հոգին զառնալով կ'ըսէ. «Չարլս տղաս, գնա նայէ որ պառկողը հաճոյք է թէ ուրիշ մէկը:» Ես ալ շուարած եմ թէ ձեր ըսած Ատատուրեանը ես՝ եմ թէ ուրիշ մէկը:»

Երեկոյթի մէջ երգիչ խումբը երգած և երիտասարդները իրենց ջութակներով գեղեցիկ կտորներ նուագած են: Աղօթքով մը վերջացած է այս հանդէսը: Մայիս 1 ի գիշերուան ժամը 9.30 ինչափ անձրեւէն թրջած ըլլալով ողջ-երթի գացած են կայարանը:

Մեծ շնորհակալութեամբ կը յիշուի նաև Վեր. Ատատուրեանի Պ. Այրէս գաւէն առաջ Տիար Յովհ. Հալէպեանի կատարած անձնուէր ջանքերը իր քարոզչանքովը, և ուրիշ մեծ ծառայութիւնները:

Պ. Այրէսի նոր հովիւը Վեր. Ա. Յարութիւնեան իր առաջին քարոզը Յուլիսի առաջին կիրակին պիտի տայ իր նոր եկեղեցիին, ինչպէս որ կ'ըսուի գրութեան մէջ:

Վեր. Ա. Յարութեանի պիտի յաջորդէ Վեր. Մ. Դրիգորեան Ծիլատեղիիոյ Հայ Միթոսական եկեղեցիին մէջ:

ՀԱԼԷՊԻ ԿՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ

Տարեկան հանդէսը կատարուեցաւ Յունիս 24ին Բեթել Հայ Աւետ. Եկեղեցիին սրահը: Եօթը տարիէ ի վեր զործող զպրոցիս ներկայ վիճակին մասին Տիար Յովհ. Շնորհոփեան կը գրէ հետեւեալը:

Դպրոցիս շէնքն է տախտակաշէն սրահ մը ուր 23 աշակերտներ—15 մանչ և 8 աղջիկ—կը դաստիարակուին: Ասոնցմէ 7 գիշերօթիկ են:

Աշակերտներու բնավայրերն են, — Այնթապ, Քիլիս, Հալէպ, Պէշլան, Մարաշ, Էրզրում, Հաճըն, Սասուն, Իգմիր, Ատրեւման, Ալէպ, Գալատարան, Քէօրքիւնէ, Քարբերդ, Սուէաիյէ, Ուրֆա և Մարտին:

Եկած են Հայ Առաք., կաթողիկ, Աւետարանական, Ուղղափառ Ասորի (Յակոբիկեան), Շարաթապահ, Յոյն Օրթոտոքս և Իսլամ ժողովուրդներէ:

Դպրոցիս մէջ կը գործեն երկու վարժուհիներ, մէկը աչազուրկ, և հայրիկ մը:

Դպրոցիս վարչութիւնը կը կազմեն 10 կամաւոր անդամներ:

Հոս կը դասաւանդուին՝ Ս. Գիրք, Աշխարհագրութիւն, Թուաբանութիւն, Հայոց Պատմութիւն, Իրազիտութիւն, Արաբերէն. Հայերէն, Անգլերէն և երաժշտութիւն: Այս դասերը կը սորվեցուին արտասանութեամբ, ընթերցումով և գրելով: Իրր ձեռական աշխատանք կը սորվեցուին գուլպայ և փսիաթ հիւսել, թելերով և ուլունքով առարկաներ շինել: Եւ ամէն առաւօտ հոգեւոր պաշտօն կը կատարուի. շաբաթը մէկ անգամ աղօթածողով կը կատարուի: Դպրոցիս ընդհանուր լեզուն հայերէն է:

Քաղաքիս մէջ գտնուող 180 ի չափ տարբեր ազգերէ և կրօններէ աչազուրկներու հետ հաղորդակցութիւն ունինք և անոնց կ'այցեցնենք:

Երկու աչազուրկ աւետարանիչներ

և մէկ աւետարանչուհի (ռչ-կոյր) թէ՛ կոյրերու և թէ՛ ոչ-կոյրերու մէջ կը գործեն:

Մօտերս դպրոցի շէնքի մը պիտի տիրանանք, որուն գետինը գնուած է: Շինութեան համար 1500 Օսմ. Ոսկի պիտի ծախսուի, որուն 150 ը հայերէ պիտի

գանձուի: Դպրոցին ծախքը պիտի կատարուի «Ֆրէնտզ ալ Արմինիա» ի կողմէն, բայց գիշերօթիկներու ծախքը բարեկամներու նուէրներու միջոցաւ պիտի հայթայթուի: Իւրաքանչիւր գիշերօթիկի տարեկան ծախքն է 16 Օսմ. Ոսկի:

ՄԱՄԼԹԵՅՆԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻՆ ՀԱՇԻՒՆԵՐԸ

Վեր. Ենովք Հատիտեան Սուրբոյ Աւետ. Միութեան այս տարուան ժողովին մէջ—որ տեղի ունեցաւ Ապրիլ 8-13 ին Հալէպ— թէ՛ բերանացի և թէ՛ գրաւոր կերպով պահանջած էր որ Միութեան կողմէ ընտրուած մասնախումբի մը պաշտօն տրուի իր հաշիւները քննելու և արդիւնքը հրապարակելու համար, այս պահանջին իբր հիմնական պատճառ յիշելով միգրթիւնը կազմող եկեղեցիներու Մամլթէյնի օգնած ըլլալու և իր՝ Միութեան մէկ բնական անդամ ըլլալու պարագաները: Արդ՝ Միութեան կողմանէ այս նպատակաւ ընտրուած մասնախումբի հանգամանքով պէտք եղած քննութիւնները կատարելէ ետք կուգանք մեր կատարած գործը և միաձայնութեամբ յանդած եզրակացութիւնը ամփոփելով ներկայացնել բոլոր շահագրգռուողներուն:

Իբր մասնախումբ մեր պարտականութիւնն ու նպատակն էին բուն իրողութիւնը գտնել և ամէն գնով վայն հրապարակել. հետեւաբար Աստուծոյ առաջնորդութիւնը ապահովելու համար մեր հաւաքոյթները ազօթքով սկսած և ազօթքով վերջացուցած ենք:

Հիւանդանոցին տարեկան տեղեկագիրները Առաք. Կաթ. և Աւետ. հոգեւոր պետերէ՝ կազմուած վարչական

ժողովին ստորագրութեամբը թէպէտ հրատարակուած են, այսուհանդերձ մանրազնին ուսումնասիրութեան ենթարկեցինք տեղեկագիրներու ստուգութեան կասկածող և ուղղակի Վեր. Ե. Հատիտեանի կարգ մը վերադրումներ ընող «Յ. Մանուէլեան» ստորագրութեամբ մէկուն գրութիւնները:

Դարձեալ ուսումնասիրեցինք այս հաշիւները քննելու համար երկար առիտն տքնաջան աշխատող նախկին մարմինի երկու մասերուն մէջ հրատարակած տեղեկագիրը, ինչպէս նաեւ այս խնդրին տեղեկ ուրիշ անձերու վկայութիւնները պարունակող գրութիւնները:

Ապա ձեռք առինք Վեր. Ե. Հատիտեանէ ստացուած բոլոր տոմարները և վաւերաթուղթերը, և գործի սկզբանք որոշելով և նպատակ ունենալով գտնելու այն բոլոր «զեղծումները» զոր ամբաստանողը կ'աշխատէր ցուցնել և որոնք տակաւին երեւան չէին հանուած: Արդ՝ խնդրոյ առարկայ Յուլիոս 1, 1923էն մինչեւ Յունիս 30, 1929 ի հաշիւները քննելով հետեւեալ եզրակացութիւններու յանդեպանք:

1. Ընդհանուր մուտքը, որ 713 տեսակներէ և 33714.29 սուրիական ոսկիէ կը բաղկանայ, մէկիկ մէկիկ բաղդատեցինք ընկալագիրներու, Բիլիֆէ ստացուած թուղթերու և նամակներու հետ. և գտանք որ կարգ մը հասոյթներու համար ընկալագիր չէ տրուած: Ասոնցմէ են, Հ. Բ. Ը. Միութեանէն ստացուած

* Աւետիս Արքեպ. Արքիարեան՝ նախահան, Դէորդ Վրդ. ձանսրդեան և ապա Եղիշէ Եպ. Կարոյեան՝ Ա. Պետ, Վեր. Ե. Հատիտեան՝ Գանձապահ:

ամսական 8.5 անգլիական ոսկիի գումարը, Դանիացի բարեկամներու նուէրները, և հիւանդապահի թոշակը վճարող Միս Ֆրիյրսընի տուած գումարը, ևայլն: Բայց նկատի առնելով որ զըրկուող ամսական կամ տարեկան տեղեկագիրներու մէջ անոնք յիշուած և հաշիւի անցուած են, այդ հասոյթներու գումարը, 33714.29 Ս. ոսկի, նոյնութեամբ ընդունուած են:

2. Ընդհանուր ելքը, որ կը բաղկանար 1541 մասերէ և 33147.59 սուբական ոսկիէ, ստացուած ընկալագիրներու, Ռիլիֆէ զրկուած պաշտօնական թուղթերու, ծախքը կատարող անձերու ձեռագիրներուն և ստորագրութեանց հետ մէկիկ մէկիկ բաղդատելով ընդունեցինք: Դատանք որ կարգ մը ծախքերու փոխաբէն ընկալագիր առնուած չէ. այս կարգէ են թոշակներու մէկ մասը, բեռնակրի, թղթատարի ծախքերը, և ծախու առնուած շատ մը առարկաները: Եւ սակայն դիտելի է որ կարգ մը ծախքերու — բեռնակրի, թղթատարի, օթոյի, չոգեկառքի համար եղած վճարումներու — փոխաբէն ստացագիր առնել սովորական չէ: Թէ ծախու առնուած ուրիշ կարգ մը առարկաներ — խօսող մեքենայ, գրի մեքենայ, օգի խտացուցիչ մեքենայ, էջ մը և նման բաները ներկայիս գոյութիւն ունին: Թէ թոշակները ուրիշի մը միջոցով կամ ուղղակի ստացող անձերը ներկայիս կենդանի են: Հետեւաբար թէ՛ ծախողներէն և թէ՛ թոշակ առնողներէն իրենց ձեռագիր ստորագրութեամբ ընկալագիր պահանջել դժուար եղած չէ:

3. Պատկան անձերու ինքնագիր ըստ ստորագրութիւնները կրող թուղթերէն հասկցանք թէ Վեր. Ե. Հատիտեան բոլոր ծախքերուն միայն հարկերին երկուք ու կէսը իր ձեռքով կատարած է, և մնացեալ ծախքերը 23 տարբեր անձերու միջոցաւ եղած են և կամ իբր

պաշարի փոխարժէքը Ռիլիֆի տրուած վճարումներու համար եղած են:

4. Ընթացիկ դրամի վերածուած փոխգրներու արժէքները Ռիլիֆի տոմարին մէջ զանազան դրամներու սակին համեմատ (որ դրամատան սակին հետ նոյն է) օրը օրին հաշուեցինք. և ըստիպուեցանք ընդունելու որ դրամի փոփոխութեան համար եղած ծախքէն զատ ուէ մնաս մը չկայ:

5. Գտանք որ ուղղակի Ռիլիֆէ առնուած և Ռիլիֆի միջոցով ստացուած գումարներու թուականներն ու արժէքները՝ ելքի մէջ արձանագրուածներուն թուականներուն և արժէքներուն հետ նոյն են:

6. Նախկին քննիչ մարմինը շինութեանց և նորոգութեանց համար եղած ծախքերը քննած և այդ մասին փորձագէտ անձէ մը առնելով տեղեկագիր մը հրատարակած էր: Մենք այս տեղեկագրով բաւականացանք համոզուելով ծախքերու շիտակ ըլլալուն:

7. Ապագայ դիւրութեան համար բոլոր ընկալագիրները թուագրելով դասաւորեցինք, տոմարի թիւերը իւրաքանչիւր ընկալագրին վրայ, և ընկալագրի թիւն ալ տոմարի մէջ նշանակելով զանոնք ծրար կազմեցինք:

8. Դատանք որ Տիար Կէրթմէնեանէ, Պարսկաստանէ, Սուտանէ, և ուրիշ աղբիւրներէ ստացուած դրամները իրենց ստացուած օրուան թուականով արձանագրուած են, միայն թէ Ռիլիֆի խողովակէն անցած գումարները ատեն մը հոքը յանձնուած ըլլալնուն համար թուականի տարբերութիւնը բնական է: Թէ ջուրի հաշիւը շիտակ է, թէ քառամեայ տեղեկագրին և տոմարին միջև առաջին ակնարկով տեսնուած տարբերութիւնը շիտակ չէ: Միայն թէ 1927-28 տեղեկագրին էջ 11ին վրայ պատրաստ ցոյց տրուած գումարը մինչ 10 սուբական ոսկի է, երկրորդ տար-

ուան տեղեկագրին մէջ փոխադրուելուն պէս սխալմամբ 60.70 Ս. ոսկի գրուած է, և թէ 1926-27 թ. տեղեկագրին մէջ 8ին վրայ բարձումի մէջ սխալ մը կատարուած է, որ եթէ շահուի իրական տարբերութիւնը միայն 6 5 զր շուրջ սուրի կը մնայ:

9. Անձամբ Հիւանդանոց երթալով պաշտօնեաներուն և հիւանդներուն հետ տեսնուեցանք: Կերակուրներուն, մաքրութեան, կանոնաւորութեան, դարմանումի կերպիւրէն տեղեկանալէ հետք նոյնութեամբ հաստատուցինք օտարներու, տեղացի բժիշկներու, միսիւնարներու և այլերու հետ պաշտօնական գրութիւններով յայտնած գովասանքը, շնորհաւորումները և քաջալերիչ խօսքերը: Ասոնցմէ կրնանք յիշել հիւծախտի մասնագէտ Տօքթ. Նիւխօ, Ամերիկեան համալսարանի փրորֆեսորներէն Տօքթ. Ուորտ, Տօքթ. Եննիգոմշուեան, Տօքթ. Պէրպլըեան, ինչպէս նաև Տօքթ. Մ. Քէշիշեան, Հ. Բ. Ը. Մ. Ի փոխ Ատենապետ Տօքթ. Պ. Սերովբեան, միսիւնարներէն Վեր. Հ. Հ. Րիկզ և Վեր. Ճէյմս Նիզըլ:

10. Գտանք թէ Հիւանդանոցի բժիշկը և պաշտօնեաներ իրենց անձնուէր ծառայութեան փոխարէն չափաւոր թոշակ կ'ստանան, որ խնամակալութեան կողմանէ կ'որոշուի: Մանաւանդ զըտանք որ հիւանդները շատ գոհ են Տօքթ. Պէտրի հոգածութենէն, զթատարութենէն և հայրական ծառայութենէն:

11. Այս հաշիւները քննելու համար 95 ժամ վատնելէ հետք ստիպուեցանք խոստովանելու թէ հաշիւները տոմարակալութեան կանոններու համեմատ ըլլալէ շատ հեռու են, և ճշմարտութիւնը գտնել թէպէտ շատ դժուար բայց անկարելի եղած չէ:

12. Իբր քննիչ յանձնախումբ բարի մտադրութեան, անկողմնակալ և յա-

մառ քննութեան, մանաւանդ Րիլիֆի հաշիւներուն կատարեալ հմտութեան արդիւնքը ըլլալով ստիպուած ենք հրատարակելու թէ այս հաշիւներու համեմատ ուէ գողութիւն մը կատարուած ըլլալու մասին ուէ մէկ կասկած բոլորովին անհիմն է:

13. Կատարեալ յարգանքով գտանք որ անուները յիշուած երեք հոգեւոր պետերը իրենց եկեղեցական պարտականութենէն զտա՝ առանց վարձատրութեան, յաճախ իրենց քսակէն՝ ծախսելով, իրենց ձեռքը գրիթէ գրամ չունենալով, հիւծախտի դէմ մաքառելու համար իբր անձնագոհ գործողներ յառաջ նետուած են: Ամէն կողմ կատարուած յամառ աւակալան զիմումներով մեր քննած չորս տարիներու միջոցին՝ 27-437.60 Սուրիական ոսկի հանգանակած են: Ամսական 6-700 հոգա կաթ, 40-75 հոգա միս, 250-350 հոգա հաց, շաբաթը վեց օր միտով կերակուր, ամէն ուրբաթ օրը սոսկով իւրտ քիւֆտէ տըրուած է: միջին հաշուով ամէն մէկ հիւանդին համար օրական 53.7 սուրիական զրշ. ծախսած են: Այս կերպով մինչ 540 հիւանդներուն ուղղակի ծառայութիւն կը մատուցանէին, հիւանդներուն ազգականները, ազգը և երկիրը պաշտպանած են անոնց զխանալով կամ չզխանալով պատճառելիք վարակումներէն: Իրենց տեղեկագիրները իրենց ստորագրութիւններով ամէն տարի հանրութեան մատուցած են, և 1930, Սեպ. 20ին բոլոր հաշիւները մանրամասնութեամբ Բ. Գոմիսէրութեան մատուցած են: Մինչ իրենց այս մեծ ծառայութեան փոխարէն ամէն մարդէ գնահատում և օժանդակութիւն կ'ակնկալէին, Վեր. Հատիտեան՝ որ գործին ծանրագոյն մասը ստանձնած էր՝ պաշտօնապէս, բայց ստորագրող երեք հոգեւորականներ հետեւապէս գողութեամբ ամբաստանուած են: Ահա ծառայու-

թիւն և ահա անոր վարձատրութիւնը: Վարձատրութիւնը ընդհանրապէս զայն տուողին անձնաւորութեան կը համեմատուի:

14. «Արեւի լոյսը կաւով չի ծեփուիր (կիւնէշին փէրթէվի պալլըգ իլէ սը-վանմազ) կ'ըսէ ամբաստանողը: Այս խօսքը հաստատելու համար այսօր մեր կողմէն վճռականօրէն և սրտէ կերպով կը հրատարակենք յիշեալ հոգեւորականներու անպարտութիւնը: Այսօր հանդերձ շատ մը պարզամիտ մարդերու միտքերը պղտորուած, նպաստընչ-ւազած, կարգ մը ժողովներ, յանձնա-խումբեր և թերթեր ասով զբաղած, շատ մը օտար և անգացի բաղձալարող և յարգելի մարդերու ժամանակը վատ-նուած է, և հիւանդներու թիւը՝ որ մինչև 48ի բարձրացած էր՝ ապաքինող-ներու և մեռնողներու անհոգիներ շառ-նուելուն համար 28ի իջած է: Եօթը ա-միսներէ ի վեր պաշտօնականներուն թո-շակ չէ տրուած: Խնամակալ մարմինը 1100 սուրիական ոսկի (880 տոլար) պարտքի տակ ինկած է: Իսկ ներկայ հիւանդները այս զօղաւորութիւններու համապատասխան սեղանէ մը կը կե-րակուին: Բիւիֆի վարիչ մարմինն ալ մօտեւր յայտնած է թէ չպիտի կրնայ հաստատութեանս պատասխանատուութիւնը ստանձնել: Մէկ խօսքով հիւան-դանոցը փակուելու վտանգին առջեւ կը գտնուի: Արդ՝ խնդիրը սա է. հի-ւանդանոցը փակուի թէ չարունակէ:

15. Հիւանդանոցին փակումով ե-թէ հիւանդները և ժողովուրդը պիտի անիրաւունին, յանձնախումբս կատար-եալ յարգանքով և վստահութեամբ ա-ռանց յարանուանական խտրութեան բոլոր եկեղեցիներու, բարեսէր անձե-րու կը յանձնարարէ, որ յիշեալ հոգեւոր պետերու հանգէպ եղած անարգանքին դէմ իրենց տածած յարգանքին, վըս-տահութեան եւ երախտագիտութեան

զգացումներուն, և այսպիսի հաստա-տութեան մը գոյութիւնը անհրաժեշտ նկատած ըլլալուն իբր նշան՝ անմիջա-պէս հանգանակութեան ձեռնարկին: Որպէս զի հիւանդանոցը յաջողի պարտ-քէն ազատել, նոր հիւանդներ ընդու-նիլ, զանոնք դարմանիլ, և այս կերպով ժողովուրդը ախտին դէմ պաշտպանել:

Սուրբոյ Հայ Աւետ. Միութեան կող-մանէ ընտրուած Մամլթէյնի հաշիւնե-րու քննիչ մարմինն անգամները

(Վեր.) ՅԿԲ. ՇՆՈՐՀՕՔԵԱՆ, Զահլէ
Ճ. Յ. ԿԱՅԾԱԿԵԱՆ, Պէյրութ,
N. E. R. Ի Գանձապահ
(Վեր.) Ս. Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ, Հալէպ

ՄԵՐ ՄԻԱԿ ԴԱՐՈՋԻՉԸ

(Շարունակութիւն և վերջ)

Պատրիարքը իր քովը կանչել տուաւ Զաղանիսը և խափա արգիլեց այս հե-րիտիկոս շարժումը շարունակելը, և անհնազանդութեան պարագային ըս-պառնաց հիլլէն հիւպատոսի միջոցաւ պինքը հեռացնել երկրէն: Բոլոր քա-հանաները միեւնոյն ատեն տենդոտ գոր-ծունէութեան մղուեցան ժողովուրդը այս աւետարանական շարժման դէմ պատրաստելու մէջ:

Այս միջոցին Յոյն քահանայ մը, որ երկու տարի առաջ Զաղանիսի թերթին մէջ եկեղեցականութեան յոռի վիճակին մասին շատ բաց կերպով գրած էր, և քահանաներուն մէջ իբր պատուաւոր և կարող մէկը ծանօթ էր, մամուլի միջո-ցաւ սկսաւ սուտ զրպարտութիւններ հրատարակել Զաղանիսի մասին:

Գաղտնի կերպով Զաղանիսի զաւա-կը առեւանգել ծրագրեցին, որ սակայն ի դերեւ ելաւ: Ապա գինեմոլ եւ ան-բարոյիկ մէկ երիտասարդը, որուն մայրը եւ քոյրը ապաշխարած էին, հա-

մուկեցին որ Զազանիսը սպաննէ։ Այս մահափորձը չկատարուած երեւան եւլաւ. երիտասարդին վրայ գտնուող զէնքը առնուեցաւ. բայց փոխանակ զայն կառավարութեան յանձնելու աւոր ներուեցաւ։

Հալածանքը սաստկացաւ։ Մանուկութեցաւ թէ ժողովներուն յաճախող Յոյն գաղութներու աշակերտները եւ անոնց ծնողները եկեղեցական եւ ազգային ամէն իրաւունքէ պիտի զրկուին, անոնց մեռելները չպիտի թաղուին, մանուկները չպիտի մկրտուին, պսակները չը պիտի կատարուին, աշակերտները զը պոցներէն պիտի արտաքսուին։

Իբր վերջին միջոց 45 եզրպ. ոսկի ամսականով կարող քարոզիչ մը հրաւիրեցին եւ սկսան վարձուած սրահի մէջ իբր թէ բարեպաշտական ժողովներ սարքել։ Այս հոգեւոր պատգամէ զուրկ հաւաքոյթին գունդ գունդ յաճախողները, սկսան կամաց կամաց պաշլի։ Ամսական 150 ոսկի ծախքը, Աւետարան կարգալու, աղօթելու, երգելու ղէմ կրկնուած անիմաստ պոռըտուքները հակառակ արդիւնք մը տուին։

Այս պահուն այս հակաւետարանական հաւաքոյթներու վարիչներէն Յոյն Օրթոտոքս քահանայ մը ամենաստորին արարքի մը մէջ բռնուեցաւ. եւ էվսէվիայի—օրթոտոքս բարեպաշտական ժողով—համակիրները բոլորովին յուռախար եղան։ Եւ այսպէս էվսէվիայի շարժումը մարեցաւ։

Իսկ միւս կողմէն հոգեւոր եզրայրութեան ժողովներուն համար վարձուած սրահը ալ պզտիկ եւ անյարմար տեսնուելով 500 հոգի պարունակող մեծ սրահ մը վարձուեցաւ, յարմար նստարաններով, էլեկտրական լամպաներով կահաւորուեցաւ, ամպիոնով, զրադարանով, երգչոնով օժտուեցաւ։ Այս բոլորէն զատ եզրայրութիւնը իր պաշ-

տօնէութեան կը վճարէ ամսական 25 եզպ. ոսկի։ Այս բոլոր ծախքերը կատարուած են առանց արտաքին ուեէ օգնութեան։

Կ'արժէ հոս Զազանիսի միջոցաւ տեղի ունեցած ապաշխարութիւններէն եւ կեանքի փոփոխութիւններէն ոմանք յիշել։

Սուտանի մէջ անգլիական կառավարութեան հաշտոյն զործող Յոյն յանձնաւոր մը Զազանիսի թերթը կարգալով ապաշխարեցաւ, եւ աւետարանական գործին մեծ ծառայութիւններ մատուց։ Այս մարդը իր բոլոր հարստութիւնը, առողջութիւնը, պատիւն ու ընտանեկան հանգրիստը բաղաւթալի զահած էր։ Բայց իր կեանքին փոխուելէն ետքը սկսաւ Տէրոջ գործին համար առատաձեռնութեամբ տալ, Սուտանի մէջ բաւական մեծ թիւով ժողովուրդի մը համար քարոզիչի մը պաշտօնը վարել, անոր բոլոր ծախքերը հոգալ, եւ Գահիրէի հոգեւոր գործին նիւթապէս օգնել։ Անգամ մը 60 եզպ. ոսկի նուիրեց. ամէն ամիս 8 եզպ. ոսկի զրկեց եւ եկեղեցական շէնքի մը համար՝ ալ 1000 եզպ. ոսկի խոստացաւ։ Գահիրէի մէջ գտնուած միջոցին անոր ցոյց տուած հոգեւոր քաջութիւնը եւ ուրախութիւնը բոլորին հիացումին առարկայ եղան։

Ուսեալ, հարուստ, բարձր դիրքի տէր Յոյն մը, որ հպարտ եւ անառակ կեանք մը ապրած էր, զժբաղդութեան մը արդիւնքը ըլլալով իր բոլոր ունեցածը կորսնցուց։ Կատարեալ յուսահատութեան մատնուելով որոշեց անձնապան ըլլալ, ղէմքը զժոխքի կնիքը կը կրէր. ինքը գիւհարի կերպարանքը առած էր։ Իր քոյրը, որ այս հոգեւոր ժողովներուն կը յաճախէր, փոփոխութիւն մը ըրած ըլլալուն համար իրեն առաջարկեց Զազանիսի հոգեւոր ժողովին երթալ։ Առաջարկը ընդունեց։

իր գացած առաջին ժողովին մէջ փոփոխութիւն մը սկսաւ տեսնուիլ իր վերան։ Ժողովներուն յաճախել շարունակելով, իրական եւ արմատական հոգեւոր ծնունդի փորձառութիւնը ունեցաւ։ Այսօր իր հոգեւոր եռանդին, քրիստոնէական նկարագրին եւ կարողութեան շնորհիւ 30 աշխույժ եւ 40 կիներէ բաղկացեալ Կ. Դպրոցի դասարանի մը դաս կուտայ։

Դարձեալ մօտեւ 94 տարեկան ծեր կնոջ մը դարձը բոլորին ուշադրութիւնը գրաւեց։ Այս կինը Յունաստանի աշխարհքէն է որ իր ըմբօստութեամբը եւ կռուասիրութեամբը հռչակ հանած է։ Իր կեանքն ալ կռիւներով եւ վէճերով անցուցած է։ Կինը վերջին ծայր ուրախ է։ Ո՞վ կրնար հաւատալ թէ չորցած ծառը կրնայ վերակենդանանալ։ Ասիկայ Տէրոջ հրաշքն է։

Ապաշխարողներու կեանքն ու վկայութիւնները մէկիկ մէկիկ պատմել կարելի չէ։ Քանզի անոնք բազմաթիւ են։ Կը ճանչնանք այնպիսի երիտասարդներ, որոնց մէջ մեղքը աւողջ բան

մը չէ թողուցած, ամէն բան կործանուած է։ Իսկ հիմա անոնց լուսափայլ դէմքերէն հաւատք, յոյս, սէր կը ցոլանան։

Սթիւ

Յօդուածագիրը Յոյնիքու մէջ եղած զբօսամոլութիւնը, ընտանիքներու մէջ պարի, շարժապատկերի, թատրոնի կատարած մեծ աւերը կը նկարագրէ, յիշելով միեւնոյն ատեն թէ Եգիպտոսի մէջ ամենանշանաւոր շարժապատկերի թատրոնը Յոյն Պատրիարքին կը պատկանի, եւ ճիշդ պատրիարքարանի կից կը գտնուի, եւ եկեղեցիէն ելլող ժողովուրդը հոն կը խոնուի։

Ապա կը յիշէ թէ ինչպէս այս տարուան Փետրուարին մէջ բոլոր հոգեւոր ոյժերը շարժման մէջ զրուեցան անխնայ տիրամէն ազգէ անհատներուն, նաեւ իսլամներուն Աւետարան բաշխելու համար, որուն մասնակցած են նոյն իսկ մանուկներ։ Կ'աղօթենք որ այս շարժումը ծաւալի ու զօրանայ օրհնութիւն մը ըլլալով ոչ միայն Յոյն օրթոտոքս ժողովուրդին այլ նաեւ ուրիշ ազգերուն։

ՕՐԵՐԵԻՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ ԱԽՏԱԾԻՆ ԵՐԵԻՈՅԹՆԵՐ

Հիները՝ աստղերու մարդկային ճակատագրի վրայ ունեցած ազդեցութեան կը հաւատային, կը կարծէին որ, ամէն անհատ աստղ մը ունի որ անոր ճակատագիրը կ'որոշէ, այնպէս որ հին աստղաբաշխութիւնը ճակատագրի գուշակելու գիտութիւն մըն էր։

Անվիճելի իրողութիւն մ'է որ բոլոր աստղերը մէյ մէկ արեգակներ են։ Աստղերը՝ մեր արեգակն ալ իրենց մէջը ըլլալով, մեր երկրագնդին վրայ բազմատեսակ ճառագայթներ կը տեղացնեն, զոր փրոֆ. Միլիքան տիեզերական (cosmic) ճառագայթներ կ'անուա-

նէ։ Ասոնք անհուն երկնային անջըպետին վեց կողմերէն մեզի կը հասնին, եւ մարդկային կազմի ու առողջութեան վրայ մեծ ազդեցութիւն մը կը բանեցնեն։ Այս իրողութիւնը վերջին տարիներու ընթացքին մեծ կարեւորութիւն մը ստացած է։

Այս տիեզերական ճառագայթներու ուղղակի կամ անուղղակի ազդեցութեան տակն է որ, եղանակի փոփոխութիւններ, ջերմաչափի յանկարծակի անկումներն ու վերելքներ, ելեկտրական անսովոր հոսանքներ, ծանրաչափի վրայ օգային ճնշման աւազին ելեւէջ-

ներ, հովեր ու փոթորիկներ, մթնոլորտի խոնաւութիւնն եւ անձրեւներ, լոյսի եւ ջերմութեան քանակի ու որակի տարբերութիւններ տեղի կ'ունենան: Ահա այս փոփոխութիւնները մեր ծծած թթուածինի քանակութեան մէջ, մեր արեան ճնշման մէջ, մեր արտաքին ու ներքին միջրոպներու ծաւալման մէջ մեծ փոփոխութիւններ յառաջ բերելով, մեր կենցաղավարութեան եւ առողջութեան վրայ մեծ ազդեցութիւններ կը բախեցնեն:

Աստղագէտ Վալօ եւ Տոքթ. Մորիս վիճակացոյցներով հաստատած են որ, արեւհարութիւններ, յանկարծակի մահեր, անձնասպանութիւններ ջերմաչափի անսովոր անկումներու եւ վերելքներու միջոցին կը պատահին, որոնք արեւուն վրայ սեւ բիծերու երեւման կը զուգարկան: Նոյնպէս կը հաւատանք որ մարդկային կեանքի եւ առողջութեան օրական ելեւէջները, տիեզերային օրական ելեւէջներուն հետ սերտ կերպով կապուած են, տենդային հիւանդութեանց ընթացքին ջերմութեան առտուան անկումները ու իրիկուան բարձրացումները, իզական սեռի ամսածաղիկին լուսնային ամսու ընթացքին հետեւելը այս տեսակէն է: Ծնունդներու եւ մահերու մեծագոյն մասին գիշերը պատահիլը նոյնպէս այս տիեզերական ճառագայթներու ազդեցութեան կը վերագրուի:

Տոքթ. Պուտէ կը պնդէ որ ծանրաչափի վրայ տեսնուած յանկարծակի անկումները՝ որոնց զրգապատճառը յիշեալ տիեզերական ճառագայթներու մէջ պէտք է փնտռուի, պնդեցողութիւն ունեցող անձանց սրտերուն վրայ անխուսափելի ազդեցութիւն մը կը բախեցնեն: Այսպիսի անկում մը պնդեցողութեամբ տառապող սրտի մը համար, ուրէ հոգեկան սաստիկ զրգուումէ կամ անխուսափելի մարմնային սաստիկ մար-

զանքներէ աւելի մահացու կրնայ ըլլալ:

Մենք առիթը ունեցած ենք տեսնելու յոգացաւ ունեցող հիւանդներ՝ որոնք երկու օր վերջը պատահելիք անձրեւն ու փոթորիկները՝ իրենց ցաւերէն դատելով ամենանորր ծանրաչափէ աւելի ճշգրիտ կերպով գուշակելու կարող էին:

Օդերեւոյթական ծայրագոյն ելեւէջներու միջոցին է որ մարդկային մարմնոյ մէջ հիւանդութեան արդիւնք եղող այլատեսակ ուռեցքներ ալ աւելի կ'ուռնին ու կը ցաւին եւ անոնց ջերմութիւնը կ'աւելնայ: Սրտի հիւանդութեանց եւ թոքախտի պատճառաւ թոքերէն ելած արեան հոսումները յաճախ ծանրաչափի անկումներու ժամանակ կը պատահին: Ասթմա (asthma) կոչուած շնչառական ղժուարութիւնը, փոթորկոտ եւ անձրեւոտ օրերուն մէջ տեղի կ'ունենայ: Յանկարծակի մահեր ընդհանրապէս փետրուար եւ Մարտ ամիսներուն մէջ կը պատահին: Ասոր պատճառը նոյնպէս ծանրաչափի անսովոր ելեւէջներն են որ պնդացած երակներու պայթման պատճառ կ'ըլլան:

Զմեռը՝ արեւու ճառագայթները աւելի քիչ ժամանակ մեղի հետ կը մնան ու այս միջոցին ալ յաճախ տապիրը զայն կը գոցեն եւ անոր ճառագայթներէն մեզ կը զրկեն: Այս պատճառով է որ մակարութային մորթային հիւանդութիւններ գարնան ժամանակ նոր յառաջխաղացումներ կ'ունենան եւ գեղձային ուռնացումներ (scrofula) գարնան միջոցին աւելի յաճախադէպ են: Այս իսկ պատճառով թոքատապ, կրիպի եւ շնչառական ու պնդեցողական հիւանդութիւններ յաճախ կը պատահին. փետրուար եւ Մարտ ամիսները տարուան ամենաշատ մահեր պատահող ամիսներն են:

Հալէպ

ՏՈՔԹ. Ա. ԺԵՊԵՃԵԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՔՐՈՆԻԿ

Երկրէ երկիր օթոմոպիլով ճամբորդելու ժամանակ շատ մը լիճերու եւ գետերու կը հանդիպինք, զորոնք օթոյով ճեղքել անցնիլ անհնարին է։ Անգլիոյ մէջ մեքենայէտ մը օթոմոպիլ մը շինեց որ առջեւի, ետեւի եւ կողմնակի եզրերուն վրայ պարկեր ունի։ Երբ գէտի կամ ծովի վրայէն անցնիլ հարկ ըլլայ պարկերը օդով կը լեցունեն եւ օթոմոպիլը հանգիստ կերպով ջուրին վրայէն կ'ընթանայ։

Յարգ գործածուած ամենամեծ հեռագրիտակին ոսպնեակը հարիւր մատնաչափ էր։ Բայց ներկայիս Բայթօն գիտնականը երկու հարիւր մատնաչափ տրամագծով ոսպնեակ մը շինեց որու միջոցաւ աստղաբաշխներ տիեզերքի մէջ գոյութիւն ունեցող բայց մեզի անծանօթ երկնային մարմիններ կը գտնեն։ Արդէն հարիւր մատնաչափ տրամագիծ ունեցող հեռագրիտակով երկու աստղերու հոյլեր Յարգգողի ճանապարհի մէջ գտնուած էին։ Բայց երկու հարիւր մատնաչափ տրամագիծ ունեցող հեռագրիտակով 16 աստղերու հոյլեր գտնուեցան Յարգգողի ճանապարհին մէջ։ Աստղերէն ոմանք այնքան վիթխարի զօրութիւն եւ տարածութիւն ունին որ մեր արեւէն միլիոնաւոր անգամներ աւելի տարածութիւն եւ մեծ ոյժ ունին։ Միեւնոյն ատեն, անպարփակիլի միջոցով մը բաժնուած են մեր աշխարհէն. բաւոյի հոսանք մը որ մէկ երկվայրկեանի մէջ աշխարհի շուրջը 7 անգամ կը դառնայ հազիւ պիտի կրնար 280 միլիոն տարուան միջոցին աստղէն մեր աշխարհը հասնիլ եւ ետ վերադառնալ։ Յարգգողի ճանապարհէն գատ աստղագէտները դիտած են մեր անհուն միջոցը եւ տեսած են աստղերու ուրիշ հոյլեր որոնք յիշ-

ուածներէն աւելի մեծ եւ զօրաւոր են։

Քիմիայէտ մը կորեկի ծիղերը քիմիական նիւթերու ազդեցութեան ենթարկելէ վերջ յառաջ բերաւ բաղադրութիւն մը որ ձգախէժի շատ նմանութիւն ունի եւ անոր զանազան յատկութիւնները կը կրէ։

Թովմաս Պէրթրամ, նշանաւոր Անգլիացի հնախոյզը, ընկերակցութեամբ խումբ մը արարներու Արաբիոյ անապատը կտրեց անցաւ, որով ինք առաջինը կը հանդիսանայ այս արարքին մէջ, որովհետեւ իրմէ առաջ մէկը չէ համարձակած այս գործը ի զուտ հանել։ Անսպասին խորը աւազի բլրակի մը տակ թաղուած՝ Շրպատ քաղաքին աւերակները գտաւ, որ հազարաւոր տարիներ առաջ բարգաւաճ քաղաքակրթութիւն մը ունեցած է։ Անսպասին խորերը ովասիւներու մօտ գտաւ այնպիսի ցեղեր որոնք իրենց ստեղծուելէն մինչեւ հիմայ ոեւէ կերպով առընչութիւն չեն ունեցած զուրսի քաղաքակրթութեան հետ։ Հոն կը գտնուին այնպիսի արաբ ցեղեր որոնք կը նմանին 5000-6000 տարիներ առաջ ապրող ժողովուրդներուն։

Նախապէս գիտունները կը կարծէին թէ՛ քիմիական բաղադրութիւններ չեն կարող կազմուիլ արեւուն վրայ անոր խիստ տաքութեան պատճառաւ։ Բայց ներկայիս 14 տեսակ բաղադրութիւններ գտնուեցան արեւուն վրայ։ Զրածին (H) եւ թթուածին (O) առատապէս կը գտնուին այս բաղադրութիւններուն մէջ։ Արդէն այս նիւթերուն կրած յատկութիւնները մենք գիտենք, ուստի կրնանք ճշգրիտ կերպով հասկնալ այն ամէն փոփոխութիւնները որոնք այս նիւթերուն միջոցաւ արեւու վրայ կը կատարուին։

Քաղեց՝ ՀԱՅԿ ՓՈԼԱՏԵԱՆ

ԱՒԵՏ. ԼՈՒՐԵՐ

«ԱՔՍՍԻՈՆ ԲՐԷԹԻԷՆ» անունով մի-
սիոնարական ընկերութիւնը, որ 9 տա-
րիներէ ի վեր Հայերու մէջ կը գործէ,
1929-30 հոկտ. չըջանին միջոցին նախ-
կինէն 72000 ֆրանկ աւելի պիւտճէ մը
ունեցած է. ընդհանուր գումարը 5280
ոսկի եղած է: Ոսկեղէն Կանոնի Կի-
րակիին առթիւ 1160 Օ.Ո. հասոյթ ունե-
ցած է: Ալզասէն 2300 Օսմ. ոսկի, Հո-
լանտայէն 1850 Պ. Ո. հանգանակուած
է, եւ Հալէպ քաղաքէն 370 Օ. ոսկի
հասոյթ արձանագրուած է: Հոլանտայի
եւ Ֆրանսայի պաշտօնատեղիներուն
ծախքը եղած է 875 Օ. ոսկի, Ֆրանսա-
յի հայերուն համար 870 ոսկի եւ Սու-
րիոյ մէջ 2922 ոսկի ծախսուած է: Այս
ընկերութեան կողմանէ Վէն ի մէջ (Լո-
զան) 4 հայ երիտասարտներ աստուա-
ծաբանական ուսում կ'առնեն. ասոնց-
մէ երեքը այս տարի պիտի աւարտեն
գպրոցը, եւ երկուքը պիտի գործեն ֆը-
րանսա եւ մէկը՝ Հալէպ:

«ԼԸ ԼԸՎԱՆԹ» թերթին գրածին
համեմատ Լիոնի (Ֆրանսա) մէջ 5500
հայեր կան: Թէ՛ քաղաքին մէջ եւ թէ՛
չըջակայ վայրերու մէջ աւետարանա-
կան գործը յառաջ կը տարուի: Կ.
Դպրոցներու յաճախող մանուկներու
թիւն է 140: Շըշիկ Ս. Գիրք ծախող-
ներ հոգեւոր օգտակար գործունէութիւն
կ'ունենան այդ տեղերուն մէջ: Ամիսը
600ի մօտ թերթիկներ կը բաշխուին եւ
100 օրինակ «Բանբեր» կը ծախուի:

Տեղիս Աւետ. ժողովուրդը իրեն
սեպհական եկեղեցիի շէնքը չունենա-
լով իր կրօնական պաշտօնները տունե-
րու կամ ուրիշ ժողովուրդներու սրահ-
ներուն մէջ կը կատարէ: Եկեղեցական
շէնքի անհրաժեշտութիւնը ունին:

Ներկայ գործիչը եւ կինը, Տիար
Եուսիֆ եւ Տիկ. Յուլիա Պարսումեան
ասկէ վեց տարի առաջ հոս գործի սկը-

սած են: Ութը ամիս վերջը մինչ Մար-
տէլի եւ Օպընասի ժողովուրդներուն
մէջ հոգեւոր արթնութիւն մը կը շա-
րունակէր, Լիոնի ժողովուրդը անտար-
բեր վիճակ մը կը ներկայացնէր: Այս
տեսակով ասոնք թախանձանօք Աս-
տուծմէ խնդրեցին որ իր զաչտին հա-
մար նոր գործիչ մը գրկէ, եթէ հոս
արթնութիւն մը յառաջ չպիտի գայ:
Այս աղօթքին իբր պատասխան այդ
ժողովուրդին մէջ ատկէ ի վեր կը շա-
րունակէ կենդանութիւն մը եւ հոգեւոր
տաք մթնոլորտ մը:

ԼՈՒՐԵՐ «ՍՔՈՒԼ ԱՎ ԲԻԼԻՃԸՆ»

Այս տարի վեց ուսանողներ գպրո-
ցէն ուսումնաւարտ եղած են: Յակոբ
Զազմագճեան, Էվանկէլոս Տէրաս (Յոյն)
Վիգգոր Նիգոլէնգօ (Ռուս) աստուածա-
բանական ճիւղը, Օր. Էլէնի Նապի
(Յոյն), Օր. Զարուհի Փաշաճըգեան
կրօնական դաստիարակութեան ճիւղը,
եւ Օր. Լէպիպէ Շէմմաս (Ասորի) ըն-
կերային ծառայութեան ճիւղը աւար-
տած են: Այս ուսանողներէն մէկը
երեք տարի, երկուքը չորս տարի եւ
երեքը հինգ տարի ուսում առնելէ ետ-
քը վկայական ստանալու իրաւունքը
շահած են: Յառաջիկայ տարի իբր ու-
սանող ընդունուելու համար ուսումնա-
ւարտներու թիւէն աւելի երիտասարդ-
ներ գիտում կատարած են: Ամառ-
ուան չորս ամիսներու ընթացքին բո-
լոր ուսանողները չըջակաները կը զրկը-
ւին գործելու համար, այս միջոցով ա-
նոնք փորձառութիւն կ'ստանան: Ա-
մերիկայի մէջ Սմիթհ Դոլէճի փրօֆէ-
սորներէն եւ նախկին միսիոնար Տր.
Հարլօ այս տարի ընկերաբանութեան
եւ Նոր Կտակարանի դասերը աւանդած
է, եւ բոլոր գպրոցին կողմանէ մեծա-
պէս գնահատուած է: Տր. Հարլօ գըպ-
րոցին համար մեծ օրհնութիւն մը եղած
է: Տր. եւ Միսիս Մէրիլ ալ տասը օրի

չափ դպրոցին մէջ ներկայ գտնուած են: Տր. Մէրիլի տուած մասնաւոր դասախօսութիւնները մեծ ուշադրութեան հետաքրքրութեան անարկայ եղան: Դպրոցը պիտի բացուի Հոկտ. 4ին:

Յունիս 4, Արեւիկ.

* *

ՊԱՏ. ՌՈՒԲԷՆ ԳԱՅԱՆԱՆ

Յունաստանի շրջիկ աւետարանիչը, իւր Մարտ 27 թուակիր նամակովը մեզի կը գրէ. —

Այս վերջին շրջանիս 250 ընտանիքներու հանդիպած եմ եւ 2 մանկապարտէզի: Արդէն նիւթապէս, տնտեսապէս կը տառապի այս ժողովուրդը, եւ այս բոլորին մէջ ոչ մէկ հոգեկան եւ կըրօնական միութեամբ ինքն կը վայելն: Այս երեք եւ չորս քաղաքներուն մէջ, ո՛չ եկեղեցի, ո՛չ քահանայ եւ ո՛չ ալ արայացու կայ երգելու այդ հոգիի խօսող, ներշնչող շարահանները: Յայն քահանան մեծ ասպարէզ գտած է հայ տուններուն մէջ, եւ ազատօրէն կը գործէ...

«Երկատարգմանութիւնը լքուած ու երեսի վրայ ձգուած է: Զուլումը, այլասերումը կը լլկէ հայ ազգիկը եւ ազան: Երանի թէ մեր հայ թերթերը չորս աչքով նայէին գիտելու թէ իրական վտանգը ո՛ւր է:»

Պատ. Գայանեան իր այս վերջին շրջանին միջոցին հինգ հատ դպրոցներ բացած, հինգ հատ աղայոց եւ աղջիկներու Միութեան կազմակերպած, հինգ հատ գրագարան հաստատած, երկու հատ գիշերային դպրոց բացած է, երկու տեղ ալ Հայ Բ. Ը. Միութեան մասնաճիւղեր կազմած է: Հայ պատիւն ու լեզուն պահող հաղարատոր գիրքեր եւ տետրակներ ցրուած է: Նա կ'ըսէ. «Կոյնակը, Բանկիւմը շատ գործ տեսան. եւ հիմա ալ նոր Աւեստանը հոգեւոր առաջնորդ մը եւ միութարիչ մը պիտի ըլլայ

այս անմիթար ժողովուրդին: Երանի թէ կարող ըլլայ այս ժողովուրդը վճարել եւ սակայն նիւթապէս տաղնապը մեծ է: Լարիսայի մէջ Յոյն թրքախօս մը կայ որ Բանկիւմ եւ «Աւեստան» կ'ուզէ միշտ:»

ՊՐ. Ե. ՏէՐ ՄԿՐՏԻՉԵԱՆ Ս. Գրանիս երկիրներու Կ. դպրոցներուն Միութեան կողմանէ այս ամառուան միջոցին Սուրբայ եւ Լիբանանի Հայ Աւետ Կ. Դպրոցներուն եւ Զանից ընկերութիւններուն մէջ գործելու համար շրջիկ քարտուղար նշանակուած է: 11 քաղաքներու եւ աւաններու մէջ մի քանի օր պիտի մնայ այցելելու Կ. Դպրոցները եւ Զանից ընկ. ներք, եւ պիտի ջանայ օգտակար ըլլալու: ՊՐ. ՏէՐ ՄԿՐՏԻՉԵԱՆ Պէշրութի մէջ Աստուածաբանութեան ուսանող է, միւսին տառն Տրիպոլիոյ մէջ կիրակի օրերը փոքրածիւ Աւետ. ժողովուրդին կրօնական պաշտօններ կատարած է:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐ

Յունիսի վերջին շաբաթը հանդէսներու շաբաթն է: Աղջկանց Բարձրագոյն Վարժարանին, Մանչիւրու Բարձրագոյն Վարժարանին, (B. H. S.) Էմմանուէլ եկեղեցիի Մանկապարտէզին եւ Նախաղթարանին հանդէսները իրարու յաջորդեցին:

Ամերիկեան Աղջկանց Բ. Վարժարանի առաջին հանդէսը, ծանօթ ընթացաւարտ կարգի օր անունով, կատարուեցաւ Յունիս 20 ին, դպրոցին շէնքը, ընտրեալ բազմութեան մը ներկայութեան: Սինեք կարգի վեց ուսանողուհիք հայերէն անգլերէն, ֆրանսերէն, արաբաստանութիւններ ըրին եւ երկուքը մէկ մէկ երկար հայերէն գրութիւններ կարգադին: Դպրոցին երգիչ խումբը ընծիր հայե-

րէն և անդլ. կտորներ երգեց :

Նոյն օրը իրիկունը Էմմանուէլ Եկեղեցիի վարի սրահը Պոյզ, Հայ Սքուլի Նախագատարաստական Բաժնի 12 աշակերտներուն կողմանէ մրցանակաւոր արտասանութիւններ եղան չորս լեզուներով, որոնք ընդմիջուեցան երգերով և հղանակներով :

Յունիս 22 ին Ալլկանց Բ. Վարժարանին վկայաբաշխութեան հանդէսը կատարուեցաւ, որու միջոցին Սիններ կարգէ 6 ուսանողուհիք, և Սոփոմոր կարգէ 18 աշակերտուհիք վկայականներ ստացան : Դպրոցս Այնթապի Սինիէրիին և Մարաշի Գոլէճին միացեալ շարունակութիւնն է : Յայտագրին կարեւոր մասը կը կազմէր Վեր. Ե. Կէօք-կէօքեանի երկար առնանախօսութիւնը, զոր խանդով և իրեն յատուկ պիւճախօսութեամբը խօսեցաւ : Ներկաները դո՛հ մնացած էին բոլոր հանգէսէն :

Պոյզ Հայ Սքուլի մրցանակաբաշխութեանց հանդէսը կատարուեցաւ Յունիս 22 ին, Էմմանուէլ Եկեղեցիի սրահը : Ընտրեալ և մեծ բազմութիւն մը սրահը լեցուցած էր : Յայտագիրը կը վարէր դպրոցին փոխ. նախագահը Մր. Բարլթըն փոխանորդելով Տր. Մէրիլի, որ մէկ տարուան արձակուրդի առթիւ Ամերիկա գացած էր : Մրցանակը շահող չորս երիտասարդներ—Տիարք Մելանկթոն Արսլանեան՝ արաբերէն, Թորոս Նահապետեան՝ ֆրանս., Ջաւէն Բուպեան՝ հայերէն և Յարթն. Մըսլիման անգլիերէն — կրկնեցին իրենց արտասանութիւնները : Հալէպի կուսակալ Վսեմ. Նէպիր Պէյ, ֆրանսական կառավարութեան զինուորական ներկայացուցիչ մը և ուրիշ կառավարական պաշտօնեաներ և բարձրաստիճան կրօնականներ կը տեսնուէին ներկաներուն մէջ : Աշակերտներուն կողմանէ դարձեալ գեղեցիկ երգեր և նուագներ ներկայացուեցան : 800 և 1500 մէդը վազքի մէջ Ա. մրցանակ

Մանուշակեանի, 200 մէդը վազքի մէջ Յ. Փալատեանի, 400 մէդը վազքի մէջ Վ. Քէօթէքլեանի տրուեցաւ : Շարադրութեան մէջ ստացան հետեւեալք. Փըրանս.՝ Գուլթուհեան, արաբ. Աղեքսանդր Մաթոսեան և արաբախօս մը, հայերէն՝ Փօլ Հասըրճեան, անգլիերէն Յ. Մինասեան : Ճըլճըլեան մրցանակ ստացաւ իր ծաղիկներու լաւագոյն հաւաքածոյին համար : Հինգ Օսմ. ոսկինոց Ալթունեան մրցանակը, որ կը տրուի մէկ տարուան դէմքերու և դէպքերու մասին լաւագոյն գրութիւնը պատրաստողին, ստացաւ Յ. Գունտագճեան : Տեղ չունինք ուրիշ շատ մը մրցանակ և նշանաւոր նոգները, պատուով յիշատակուողները հոս գրելու : Այս տարի դպրոցին երեք բաժիններուն բարձրագոյն կարգի աշակերտներուն վկայականի տրուեցան : Պոյզ Հայ Սքուլի աշակերտութեան թիւը եղած է 165 :

Ժողովուրդը շատ գոհ ապաւորութեամբ բաժնուեցաւ սրահէն :

ՊԵՅՐՈՒԹԻ ԱՄԵՐԻԿԵԱՆ համալսարանի հօթը տարբեր ճիւղերէն 21 Հայեր վկայական ստացած են : Պօսկաւոր արուեստից տիտղոսով (B. A.)՝ Տիարք Ռ. Պէրպէրեան, Պ. Յ. Հայտոսեան, Յր. Ե. Գալայ-եան, Ա. Ճ. Գրիգորեան, Օշին Ա. Սընըզճեան, Մ. Շնորհօքեան : Առեւտրական ճիւղէն՝ Օր. Վ. Ա. Աւետիսեան, Յկ. Գաբազլուեան, Գ. Ներսէսեան, Ա. Սէրվիտարեան : Դեղագործական ճիւղէն՝ Հ. Հմայեան (պատուով) : Ատամնարուժական ճիւղէն՝ Ս. Յ. Աւետիսեան : Բժշկական ճիւղէն՝ Հ. Թ. Ջաղլասեան (պատուով) Ս. Ե. Սէմէրճեան (պատուով) Խ. Յ. Երէցեան :

Մրցանակներ ստացած են, Յր. Գալայեան՝ Սինիւր կարգի առաջին սքալըրշիփը, և Գէորգ Հազարապետեան՝ փրէշէն կարգի առաջին սքալըրշիփը :

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԱՐՁԱԳԱՆԳ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Պատրիարք ընտրուած է Եգիպտոսի առաջնորդ Էւ լուսահոգի Դուրեանի սաներէն Տ. Թորգոմ Արքեպս. Գուշակեան, 41 ժողովականներէն 34 ին քուէներով, Յունիս 16 ին:

Նորընտիր պատրիարքը ծնած է պարտիզակ 1874 ին, ուր նախակրթութիւնը առնելէ հետքը Արմաշի մէջ աշակերտած է Օրմանեանի եւ Դուրեանի: 1896 ին վարդապետ ձեռնադրուած է եւ վարած է Արմաշի վերատեսչութիւնը:

Սերտասիրոյ մէջ և 1913 էն իվեր Եգիպտոսի մէջ իբր առաջնորդ պաշտօնավարած է: Իբր նուիրակ պտըտած է մինչեւ Հնդկաստան եւ վերջերս ալ Եւրոպա:

Իր անբասիր կեանքը, խորհող միտքը, հեղ բնաւորութիւնը, հին և նոր հայերէնի հմտութիւնը իրեն մասնաւոր գիրք մը կուտան հայ եկեղեցական դասին մէջ: Արժանաւորագոյն ընտրութիւն մը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ Հայ Աւետ. Միութեան 30րդ. տարեկան ժողովը տեղի ունեցած է Ուստըրի հայ Մարտիրոսաց Եկեղեցիին սրահը: Միութեան առաջին ժողովը ալ հոս գումարուած է: Նոյն եկեղեցիին շէնքն ալ շինուած ըլլալով ասկէ 30 տարիներ առաջ երկու զէպքերուն ալ տարեգարձը տօնուած է յարմար կերպով: Վեր. Պէննէհան, որուն հոգևոր գործունէութեան 30րդ. տարեգարձն է ներկան, այս եկեղեցիին մէջ ունեցած է կարևոր գործունէութիւն մը:

Այս Միութիւնը 13 եկեղեցիներ և 13 առաքելութիւններ ունեցած է, անդամներու թիւը հասած է 1333 ի և տարեկան պիւտճէն եղած է 63510 տոլար:

Այս առթիւ կատարուած է նաեւ Վեր. Ա. Յարութիւնեանի առաքելման արարողութիւնը: Վեր. Յարութիւնեան,

Ֆիլատէլֆիայի հովիւը, ընդունած է Պուէնտս Այրէսի Աւետ. եկեղեցիին հովուութիւնը:

Ուրբաթ օրը կատարուած է Աւետարանչական Ընկերակցութեան 13րդ տարեկան ժողովը, Ատենապետութեամբ Վեր. Գալայճեանի: Տր. Ե. Հատիւեան և Վեր. Ա. Պետիկեան ներկայացուցած են իրենց տեղեկագիրները: Տիար Մուշեղեան, ընկ. Ի դանձապետը, բացակայ ըլլալով անոր տեղեկագիրը կարգացուած է քարտուղարին կողմէ: Աւետարանչականի խնամակալութեան իրենց շրջանը լմնացած 5 անդամներուն տեղ և հրաժարած երկու անդամներու տեղ նորեր ընտրուած են:

Միութեան նախագահ ընտրուած է Վեր. Ա. Պետիկեան, փոխ նախագահ՝ Վեր. Ն. Պաշտուրեան, քարտուղար՝ Վեր. Կէօրկիզեան, գանձապահ՝ Տիար Յ. Փիլիպպոսեան:

Այս տարուան ժողովը աւելի սիրալիր և եղբայրական ոգիով եղած է քան իր նախորդները:

Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ Քալիֆորնիոյ շրջանակին պատգամաւորական ժողովը տեղի ունեցած է Մայիս 16 ին, և 17 ին կատարուած է միութեան արծաթեայ յոբելեանը նախագահութեամբ Դարեգին եպիսկոպոսի: Միակատենախօսը եղած է Վեր. Փափազեան՝ որուն հետեւեալ խօսքերը խոր տպաւորութիւն ձգած են: «Փոխանակ առանձնաբար տալու միասնաբար տալ, բացառաբար տալու սովորաբար տալ, զգացումով տալու համոզումով տալ, շահադիտաբար տալու զոհարեալաբար տալ, խտրականութեամբ տալու այլասիրաբար տալ, պատահաբար տալու կազմակերպեալ տալ»:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ կրթական հաստատութեան կողմէ այս տարի տրուած մըրցանակներէն մէկը շահած է Հայկ Կրէկոսի Ապոեան, Ամերիկա:

Ե. Բ. ԶԱՆԻՑԻ ԷԶԸ

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԻ ԳԱՆՁԷՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԲԱՆԵՐ

«Տեղը մեր առհեռու անօրհեռութիւնը
անոր վրայ դրաւ:» Եսայի 53. 6:

Ի՞նչ խորունկ գաղտնիք: Մենք
չափ անգամ կարգացած ենք այս հա-
մարը առանց թափանցելու անհղճմար-
տութեան: Երսուս, անմեղը, Աստու-
ծոյ Միածինը, մեր բոլորին անօրէնու-
թեան պատիժը կրած է:

Զարմանալի չէ՞ այս: Կարելի՞ է
որ մէկը պատրաստ ըլլայ ուրիշի մը
յանցանքին պատիժը կրելու: Թերե-
ւըս — եթէ բարեկամ մ'է այդ միւսը՝ կամ
սիրելի մը: Բայց ամէնուն, նոյնիսկ
թշնամիին անօրէնութիւնը կրել...

Երսուս տառապէս զայս ըրած է:
Մա մեղաւորին, աս գինեմոլին ու այս
անհաւատին, այո՛, գինք ծաղրող Փա-
րիսեցոց ու խաչող ամբոխին, և իմ —
ամէնուն անօրէնութեան պատիժը կը-
րած է, որպէսզի Հայրն Աստուած կա-
րող ըլլայ ներելու մեղքերը այն ամէ-
նուն որ Որդւոյն անունով իրեն կու-
գան:

Ուստի ես պարտիմ իրեն հաւատալ:
Երսուսի սիրտը վերաւորող մեծագոյն
բանը իրեն չհաւատալն է: Քանզի այդ
կընշանակէ բոլոր իր սէրը, տառապան-
քը, և չարչարանքը, — այն բոլորը զորս
մեզմէ իւրաքանչիւրին համար անհա-
տապէս կրեց՝ ի դերեւ հանել, անտեսել,
անգոյնել: Ուստի պէտք է գամ իրեն,
«խնայեալ ու եղբայր», և խնդրեմ որ իր շը-
նորհքը զիս ապատէ մեղքէ և դատա-
պարտութենէ:

Զինք սիրելի ինք պէտք է սրտիս
բովանդակութիւնը գրաւած ըլլայ, իր
անուան յիշումն իսկ պէտք է թրթռացը-
նէ իմ սիրտս: Մէկը ըսած է. «Իր մա-
սին թեթեւութեամբ մի՛ խօսիք, Ան իմ

լաւագոյն բարեկամս է»: Նոյն զգացու-
մը ունենալու եմ ես ալ:

Իրեն հնազանդիլ: «Եթէ մէկը զիս
կը սիրէ՝ իմ խօսքս պիտի պահէ»: Իր
խօսքերը, իր լիբան քարոզը, համայն
Նոր Կտակարանի մէջ ի յայտ բերուած
իր պատգամները պէտք է բխարկանան
կեանքիս մէջ: Այս բանին համար կը
կարօտիմ իր Հոգւոյն, որով կարող պի-
տի ըլլամ իր պատուիրանները գիտ-
նալ, հասկնալ և կարդալ: «Եթէ Քը-
րիստոս ձեր մէջ է, ալ մարմինը մեռած
է մեղքի համար»:

Քաւապ, 1931.

Տ.Ն.ՔԱՍՈՒՆԻ

ԹԻՍՆԱՄԵԱՅ ԾԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆՆ
ՋԱՆԱՍԻՐԻ

«Փորթլէնտ» ծոցէն մեկնելով
Վայելուչ նաւ մը — Զանաւել —
Երսուս տարի անխրոզով
Սուրաց՝ քայլով ծագող, անվահեր:
Քէփթըն Գըլարք՝ ղեկավարն
Վարիչ մըն էր քաջ տննման,
Որ ուղղեց մեզ անըստառ
Ամենով մը զէպ՝ մի վեհ կայան:

Ոչ համբաւի, զըրամի
Ո՛չ ալ վարձքի սէրըն գըճուճ
Նաւապետին վեհոգի
Աչքերն երբեք չըլլացուց:
Այլ ըստ վերին տեսիլքին
Երիտասարդ շատ սերունդներ
Գըլարք գըրկեց կաթողին,
Ուղղեց զանոնք միշտ զէպի վեր:

Այսպէս մեր նաւն փորթլէնտէն
Ճամբայ ելաւ կէս դար առաջ
Ընտրելով իբր միակ տպուէն:
Այգն երկնային, լուսաճաճանչ:
Հսկայ Ատլանտիտան կտրելով՝
Հասաւ ցամաքն Բրիտանական
Խաղաղական ի՞նչ փութով
Ահա՛ տուաւ միանգամայն:

Յ.Զ.

Արեւելք ու Արեւմուտք
Հիւսիս ու Հարաւ, միաբերան
Ողջունեց այս նորամուտ
Հիւրըն օտար բայց սիրական:
Ամենուրէք — Ասիա,
Եւրոպա և Ամերիկա —
Ջանքի հրաւէրդ՝ տես՛, ահա՛
Ծաւալած է, 'իւրա՛րք, ցընծա՛:

Չընաշխարհիկ տեսիլներ,
Յոյս մը անխախտ, իտէալ վսեմ՝
Ամբոխուած հո՛ն — ի Ջանասէր —
Համայն աշխարհ լոյս սըփուած են:
— Ո՛հ, հոգեշունչ աղօթքներն
Սուրբ Մատեանէն պատգամներ նոր
Երիտասարդն չհո՛ն գիւթեր,
Չհո՛ն գըրաւեր սիրտն անոր:

Փոթորիկին ու բուքին
Կոհակներուն ալ ամենի
Գողումներուն մոլեգին
Սառուածն մեր սիրտն կը նռաղի:
— Ամենեւին, քանի որ,
Տէրն փոթորկաց մեզ է պաշտպան
Եւ Ջանասէրն պիտ' Անոր
Անուամբ լինի յաղթական:

Յիսուն տարի. և հիմայ
Ջանասէրն մեր անզուգական
Իբր օգանաւ կը ունայ
Կրեւով զափնին յաջողութեան:
Հասնելով ծոցն Պոստոնի,
Պիտ' ապշեցնէ նա ամբոխներ
Եւ պիտի նորէն սաւառնի
Դէպ զիս իտէալն՝ աւելի վեր:

Օգանաւնիս այժմ նոր է
Մղիչն հաւթկու, տես՛քն ալ հըզօր
Եւ Ջանասէրն կ'անդգոսնէ
Փոթորիկներն իսկ ահաւոր:
Դանիէլ Փօլինկ՝ երբ հիմայ՝
Սաւառնորդնիս է քաջարի
Օգանաւն պիտ' աներկբայ
Յաղթէ ծովու, ցամաքի:
Թրգմ. Ճ. Գուլումճեան

ԼԻԼԻՆ ԻՆՉՊԷՍ ԾԱՌԱՅԵՑ ՅԻՍՈՒՍԻ

Կրտսերներու բաժինէն տասնըմէկ
տարեկան աղջնակ մըն է Լիլին: Նա կը
սիրէր իր Փրկիչը և կ'ողգէր ծառայէլ Ա-
նոր. բայց ինչպէ՞ս: Խորհեցաւ և վեր-
ջապէս գտաւ կերպ մը: Իրենց զրացի
աջագոյրկ Աղնիւը շատ դժուարաւ կըր-
նար դպրոց երթալ ու գալ: «Եթէ Յի-
սուն իմ տեղս ըլլար պիտի օգնէր անոր»
ըսաւ նա ինքնիրեն և հեծեւեալ առտու
Աղնիւին ձեռքէն բռնելով տոաջնորդեց
դպրոց և նոյն բարի գործը շարունակեց
լման տարի մը:

Դուն ին՞չ կ'ընես Յիսունսի համար:

«ՋԱՆԻՅ»Ը ԱՆԵԼԻՔ ՈՒՆԻՒ

Դպրոց կը պահէ՞ ան. մարմնակըր-
թանքի հետամուտ է, հայ գրականու-
թեան ոյժ կուտայ, Հայ թատրոնը կը
քաջալերէ՞ ևն, ևն: ոչ: Ուրեմն ոչինչ
կ'ընէ և անոր գոյութիւնը աւելորդ է:
Այսպէս կը տրամաբանին շատեր՝ որոնք
միայն չոչափելի բաներուն կարեորու-
թիւն կընծայեն:

Իրաւ է որ «Ջանից»ը ուղղակի չ'ըզ-
բաղիր այս բաներով, այսու հանդերձ նա
ունի իր անեկիքը: Ան կ'օգնէ այն երի-
տասարդներուն որոնք որոշած են Յի-
սուն Քրիստոսի հետեւիլ և կը հրաւիրեն
ուրիշներն ալ որ նոյն որոշումը տան ի-
րենք իրենց համար: «Ջանից»ի իրա-
կան անդամ մը՝ Ժպիտ, շնորհք, սէր
և կենսունակութիւն կը սփռէ տունը.
դպրոցին մէջ, փողոցը, խաղաղայրին
վրայ, շուկան եկեղեցիին մէջ և «Ջա-
նից»ը կը քաջալերէ այս տեսակ ապրե-
լակերպը: Ահաւասիկ անոր անեկիքը:

ՊէՅՐՈՒԹԷՆ ԿԸ ԴՐԵՆ. — Այս տարի «Ջա-
նից»ի անդամներէն քսան հոգի շրջա-
նաւարտ եղան տարրեր դպրոցներէն և
Յուն. Ծ ի իրիկուն, ի պատիւ անոնց

երեկոյթ մը սարքուեցաւ Ա. եկեղեցւոյ սրահին մէջ ուր ներկայ էին բոլոր անդամները և մասնաւոր հրաւիրեալներ: Պատ. Յ. Արզարեանի անհանգստութեան պատճառաւ նախագահից վեր. Ե. Կէօքէօզեան: Պրն. Յ. Մանուկեան և Յ. Եագուպեան, մին գլուղայիի և միւսը ուսեալ մարդու մը տարազով բեմ ելլելով ներկայացուցին տրամախօսութիւն մը որ կը շեշտէր ուսեալի և անուսի տարբերութիւնները: Պրն. Ե. Տէր Մկրտիչեանի կողմէ կարգացուեցաւ ոտանաւոր մը որ վեր կը հանէր շըրջանաւարտներուն արժանիքները: Մեներգեց Օր. Մկրտիչեան եւ Միս Ճիւսընի կողմէն Անգլ. լեզուով բանախօսութիւն մը եղաւ «Շրջանաւարտի մը Պարտականութիւնը» նիւթին շուրջ: Ներկաները հիւրասիրուեցան պաղպաղակով և երեկոյթը փակուեցաւ Վեր. Ե. Հատիտեանի օրհնութեան աղօթքով:

ՍԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ԾՆՈՒՆԴԻ ԵՐԿԸ

Ազատ քաղաքներուն Զարդ Տիգրանի
ցրտածներէն

ՎԼՈՒԽ Դ.

— Եւ գիտեմ, ըսաւ Պօպ, գիտեմ, սիրելիներս, որ երբ մտքերնիս բերենք թէ ան այեքան փոքրիկ մանկիկ մ'ըլլալով հանդերձ, որքան համբերատար ու որքան հիւզ էր, այն ատեն իրարու հետ չը պիտի կռուիք, ու այգպէս ընելով մոռնան մէկ փոքրիկ թիմը:

«Ոչ, երբեք, հայրիկ», դարձեալ գոչեցին ամէնքը

— Շատ երջանիկ եմ, ըսաւ Պօպ, չատ երջանիկ: Տիկին Բրէջիթ համբուրեց զայն, իր աղջիկները համբուրեցին զինքը, երկու փոքրիկ Բրէջիթները

համբուրեցին զինքը, և Պետրոսն ու ինքը իրարու ձեռք թոթուեցին: Ով փոքրիկ թիմի ոգի, քու էութիւնդ Աստուծոյն էր:

«Ով ոգի», ըսաւ Սքրուէ, «բան մը կ'իմացնէ ինձ թէ մեր բաժանման վայրկեանը մօտեցած է, ասիկա գիտեմ: Թէ և ինչ կերպով գիտեալս չեմ գիտեր: Կը խնդրեմ, ըսէ ինձի, ո՞վ էր այդ մեր տեսած մարդը որ մեռած պառկեր էր անկողնոյն մէջ:

Գալիք Ծնունդի Ոգին Սքրուէն տաւ իր հետ. — Թէ և ժամանակը կարծես թէ փոխուեցաւ, արդէն այս վերջին տեսիլներուն մէջ կարգ կանոն չէր տեսնուէր, սա միայն որոշ էր թէ ասոնք ապագային մէջ ըլլալիք բաներ էին — այո՛, Ոգին Սքրուէն իր հետը տաւ վաճառականներուն ժամադրաւայրը: Հոն Սքրուէ տեսաւ բոլոր ծանօթ առեւտրականները, սակայն ինք անոնց մէջ չը կար: Ոգին չը կեցաւ հոն, իր ճամբան շարունակեց, կարծես թէ բաղձալիալ նպատակին կը զիմէր: Պահ մը ետքը Սքրուէ աղաչեց անոր որ վայրկեան մը կենայ: «Աս բակը» ըսաւ Սքրուէ, «որուն մէջէն այսքան աճապարանքով կ'անցնինք, իմ գործատեղիս բակն է. երկար ատենէ ի վեր այս տունը իմ վաճառաւունս եղած է. թոյլ տուր տեսնեմ թէ գալիք օրերուն մէջ ես ինչ պիտի ըլլամ:»

Ոգին կեցաւ. իսկ իր ձեռքը անդին ուրիշ տեղ մը ցոյց կուտար:

«Տունը սա գիմացնիս կը գտնուի», ըսաւ Սքրուէ, սակայն դուն տեղի անդին ինչո՞ւ կը ցուցունես:»

Անողորմ մարդը իր ուղղութիւնը հրեք չը փոխեց:

Սքրուէ շուտ մը իր պաշտօնատեղիին մօտեցաւ, և պատուհանէն ներս նայեցաւ: Ներսը պաշտօնատեղի մըն էր, բայց ոչ իրենը: Կարասիները փոխուած էին, և իր նախկին աթոռին

վրայ ուրիշ անձ մը կը նստէր:

Ոգին միշտ աւելի անդին ցոյց կուտար:

Սքրուճ անոր հետեւեցաւ, չէր գիտէր թէ ո՛ւր կ'իրթային և ինչո՞ւ կ'իրթային: Հուսկ յետոյ երկաթեայ մեծ գրան մը առջեւ հասան. Սքրուճ մըտնելէ առաջ սկսաւ չորս կողմը նայիլ: Ի՛նչ տեսակ տեղ մ'էր արդեօք: ... Գերեզմանատէ՛նը... Ուրեմն այն թշուառ մեռեալը՝ որուն անունը հասկընալ կը փափաքէր, հոս թաղուած ըլլալու էր: Սակայն ի՛նչ խեղճուկ գերեզմանատուն, որքա՛ն կը վայելէր իրենց տեսած թշուառ մեռելին: Չորս կողմը շնորհքով պատեր չը կային, խտտերն ու մամուռները ամէն ակ պատած, գերեզմանները շատ խիտ, ամէն բան ճնշիչ խեղդող տպաւորութիւն մը կը թողուր: Ի՛նչ թշուառ գերեզմանատուն թշուառակա՛ն մեռեալի:

Ոգին գերեզմաններուն մէկուն քով կանգ առաւ և մատովը քարը ցոյց տուաւ: Սքրուճ դողալով մօտեցաւ: Ոգին նոյն ոգին էր, սակայն ինչո՞ւ հիմայ այնքան աւելի սարսափ կ'ազդէր քովինին:

«Այս ցոյց տուած քարիդ քով զալէս առաջ», ըսաւ Սքրուճ, «սա մէկ հարցումիս պատասխան տուր. այս բաները որ կը ցուցունես անպատճառ տեղի պիտի ունենան, թէ ապագային կարելի է որ տեղի ունենան:»

Ոգին տակաւին միւսնոյն գերեզմանաքարը ցոյց կուտար, անոր առջին անշարժ կեցած:

«Մարդոց ընթացքը զիրենք որոշ վախճաններու կը տանի, և այդ վախճաններու անպատճառ կը հասնին, եթէ իրենց ընթացքին մէջ յարատեհն», ըսաւ Սքրուճ, «Բայց եթէ իրենց առաջուան ճամբէն ետ դառնան, այն ատեն վախճանն ալ կը փոխուի: Ըսէ՛, կ'ա-

ղաչեմ, քու ցոյց տուած վախճանդ ալ այսպէս չէ՞»:

Ոգին միշտ լուռ և անշարժ կը մնար:

Սքրուճ ծունկի եկաւ, ու անոր մօտեցաւ, սաստիկ կը դողար, մատին ցոյց տուած տեղը նայեցաւ, և անխնամ ձգուած գերեզմանաքարի մը վրայ գրուած տեսաւ բուն իր անունը, ԷՊԷՆԷՋԷՐՈՒՄԻ:

Ու ծնրադրած աղաղակեց. — «Միթէ այն անկողնոյն մէջ տեսած մարդս ե՞ս եմ»:

Ոգին մատը գերեզմանէն իրեն, և իրմէ դարձեալ գերեզմանին ուղղուեցաւ:

«Ոչ, ով ոգի, կ'աղաչեմ, ո՛չ, ո՛հ, ո՛չ»:

Մատը հոն կը ցուցնէր տակաւին:

«Ով ոգի», աղերսեց Սքրուճ, ու ժգին անոր քղանցքին փաթթուելով, «կ'աղաչեմ մտիկ ըրէ, հս ա՛լ առջառան մարդը չեմ, հս պէտք էր որ այս տեսիլքը տակաւին չը տեսած փոխուէր, բայց հիմայ ճշմարտապէս փոխուած եմ, ինչո՞ւ ուրեմն այս քարը կը ցուցնես ինծի, միթէ ինծի համար ա՛լ ամէն յոյս կորսուած է»:

Առաջին անգամ ըլլալով տեսնուեցաւ որ ոգին մատը կը դողդղար:

(Շարունակելի) (32)

Շարունակութիւն 190 որդ. եջին

որուն հասոյթի աղբիւրները զգալիօրէն նուազած էին արդէն: Զղջումը, ժողովականներու գեղեցիկ զգացումները չը կրցան դժբաղդ հիւանդներուն փորը կշտացնել և հիւանդանոցին կայութիւնը բարւոքել:

Փրկեցէ՛ք Մամլթէյնի Հիւանդանոցը եթէ չէք ուզեր որ հիւժախտը իր մուրթ ստուերը չտարածէ և նոր կեանքեր չորսայ տառապող հայութիւնէն:

ԿՈԶ

Սիրելի Բարեկամ,

Սելանիկի Հայերկ. Ե. Ք. Ջանասիրաց Ընկերակցութիւնը, որուն նախաձեռնարկ եղաւ տեղւոյ Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հովիւ Պատ. Կ. Ս. Յարաճեան, վերջերս ձեռնարկած է ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ մը հիմնելու և ապահոված՝ կարգ մը գիրքեր, անգամ համակիրներէն: Ջանասիրացը կ'աշխատի իր կարողութեան սահմանին մէջ և կարելիութեան լիակոյն չափովը ոչ միայն իր անդամներուն, այլ նաեւ հայ հասարակութեան մէջ ընթերցասիրութեան փափաքը արծարծել:

Այս առթիւ, Ձեզի և Ջանասիրացով հետաքրքրուողներուն, Միութեան սիրալիր բարեւները հաղորդելով հանդերձ, կը խնդրենք որ Ընկերակցութեան ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԸ ճոխացը-

նելու համար Ձեր կարելին ընէք:

Լիայոյս ենք, որ մեզ քաջալերելու համար, Ձեր նիւթական աջակցութեան ապացոյցը որեւէ կերպով պիտի չնորհէք և մեծապէս երախտապարտ պիտի թողուք մեզ:

Հաճեցէք ընդունիլ մեր կանխայայտ շնորհակալութիւններ և անկեղծ մեծաբանքներուն հաւաստիքը:

Մնանք քաղցր ափնկալութեամբ, Ձերդ յուսալից՝

Ի գիմաց

Ե. Ե. Ք. Ջանասիրաց Վարչութեան

Ա. պետուհի Նախագահ

Մ. Պ. Մորճիկեան Կ. Ս. Յարաճեան

Ա. դպիր

Յ. Ա. Գըզըլեան

Հասցէ B. P. 34,

Salonique, Grèce

صاحب الامتياز والمدير المسئول القس ق. هاروتونيان